ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ-ից ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-Ն: ՀԱՍՑԵ՝ ք. ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32: ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գինը՝ 100 դրամ:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
15 ՄԱՅԻՍԻ 2013Թ • № 12 (285)

www.syuniacyerkir.am

Եվ դարձել է ահա ժողովուրդը ե՛ւս, Իր փերերի նման, անուղի ու անդեմ...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Հիգերակ-Ագարակի Սբ Ամենափրկիչ եկեղեցին

Ագարակի պղնձամոլիբդենայինը XV-XVI դդ. եկեղեցու տեղում հանք կբացի

ԱՌԱՆՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Ըստ էկոլուրի (12 ապրիլի 2013թ.)՝ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը պատրաստվում է հանքաքար արդյունահանել XV-XVI դարերի բազիլիկ եկեղեցու տակից: Բաց հանքի տարածքում գտնվող եկեղեցու տակ զբաղեցնող պաշտպանիչ բնամասում առկա է 2995.0 հազար տոննա հանքաքար, որտեղ պղնձի պարունակությունը 0.237% է, իսկ մոլիբդենինը՝ 0.028%:

Այս մասին նշված է Ագարակի բաց հանքի ընդլայնման աշխատանքային նախագծում: Կոմբինատը պարտավորվել է պետբյուջե փոխանցել 400 հազար ամերիկյան դոլարին համարժեք դրամ, որպեսզի եկեղեցին տեղափոխվի Ագարակ քաղաք:

Բաց հանքի արտադրողականությունը տարեկան 3 միլիոն տոննայից դառնալու է 3,5 միլիոն տոննա: Նպատակն է բաց հանքի արտադրողականությունը համադրել Ագարակի հարստացուցիչ ֆաբրիկայի արտադրողականության հետ, որը տարեկան նույնպես կազմում է 3,5 միլիոն տոննա: Հանքավայրի հանքարդյունահանման հատուկ լիցենզիայի գործունեության ժամկետը 25 տարի է:

■

Մեղրիում չորանում են ընկուզենիները եւ կորիզավորները, վտանգ է սպառնում նաեւ նռնենուն ու թզենուն

ԿԱՏԱԿԼԻԶՄ

Անցյալ տարվա աշնանից նկատվող այդ երեւույթին պատկան մարմինները, այդ թվում՝ հանրապետության գյուղնախարարությունը, շարունակում են ուշադրություն չդարձնել: «Սյունյաց երկրի»՝ դրանից բխող հարցերին պատասխանում է Սյունիքի ԳԱՄԿ-ի Մեղրու տարածաշրջանի գյուղատնտեսության գծով խորհրդատու Գեւորգ Մարգարյանը:

– Պարո՛ն Մարգարյան, գարնան զարթոնքին Մեղրիում նկատվել է ընկուզենիների չորացման միտում, որը շարունակում է խորանալ: Ինչո՞վ է դա բացատրվում:

– Այո, այդպիսի երեւույթ է նկատվում Մեղրիում: Եւ դա, կարծում եմ, պայմանավորված է կլիմայի փոփոխությամբ, շրջակա միջավայրի աղտոտվածությամբ, ինչը հատկապես հանքավայրերի գիշատիչ շահագործման եւ բնապահպանական հարցերի հանդեպ անտարբերության հետեւանք է: Տերեւի գորշ բծավորությունը եւ ճյուղերի չորացումը մայիս ամսվան բնորոշ հիվանդություն են, որ կարող են առաջանալ նաեւ մի շարք այլ պատճառներով եւս (երաշտ, ցրտահարություն, սնկային եւ վիրուսային հիվանդություններ, միջատների հասցրած վնաս, ծառերի բնի եւ ճյուղերի վնաս): Եւ վարակված ու չվարակված ճյուղերն իրարից դժվարությամբ են տարբերվում:

– Կներեք, բայց Ձեր բնութագրումներն ոչ բոլոր դեպքերում են համոզիչ: Երաշտ ասվածը դեռեւս լիովին նկատելի չէ, բայց Դուք դա պատճառների շարքն եք դասում: Արդյո՞ք դա չի նշանակում, որ տեղի ունեցող երեւույթների մասնագիտական, գիտական պատճառները վերջնականապես պարզված չեն:

– Այդ երեւույթը նկատվել է 2012 թվականի աշնանից, սակայն... Աշնանը Հայաստանի ազգային ագրարային համալսարանի առաջատար մի քանի գիտնականներ այցելել են Մեղրի ու մի քանի փորձանմուշ վերցրել, բայց քանի որ եղել է բերքահավաքի շրջան, ուսումնասիրությունն ավարտին չի հասցվել, կիսատ է մնացել: Սակայն հաստատվել է (կամ առաջին տպավորությունն այն է եղել), որ այս դեպքում բակտերիալ, վիրուսային եւ սնկային հիվանդությունները համատեղված են, բայց լիարժեք

ուսումնասիրությունը (հողի նմուշի եւ ծառերի բնափայտի անալիզ), կրկնում եմ, դեռ չի ավարտվել, ընթացքի մեջ է, որն ավարտելու համար որոշակի ժամանակ եւ ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ:

– Արդյո՞ք նախորդ տարիներին նույնպես նման երեւույթներ նկատվել են Մեղրիում:

– 2011, 2012 թվականներին՝ այո:

– Եւ ի՞նչ ընթացք է ունեցել այդ երեւույթը,

Շարունակությունը՝ էջ 2

Ազատությունը չվերածել սանձարձակության

ՄԱՅԻՍԻ 3-Ը ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

Տոնական օրերին սովորաբար քննադատական խոսքեր չեն ասում: Ընդունված է, որ այս կամ այն տոնի առթիվ սովորաբար շռայլում են դրական խոսքեր ու մաղթանքներ: Ամբողջ աշխարհում մայիսի 3-ը նշվում է որպես մամուլի ազատության օր: Այդ առթիվ ամենատարբեր կազմակերպություններ զեկույցներ են հրապարակում աշխարհում մամուլի ազատության վիճակի մասին, ներկայացնում խնդիրներ ու վիճակագրություն: Հայաստանն էլ այդ ամենից դուրս չէ: Պարզվում է, որ մենք բարելավել ենք մեր ցուցանիշն ու մի քանի հորիզոնականով վերեւ բարձրացել, սակայն մամուլի համար դեռ շարունակում ենք համարվել մասամբ ազատ երկիր: Դա իհարկե ոգեւորիչ է եւ հուսադրող: Այսօր լրագրողներին չեն ծեծում, բանտ չեն նստեցնում ու թերթեր չեն փակում: Սա նշանակում է, որ մենք կատարել ենք մեկ քայլ առաջ դեպի ժողովրդավար երկիր ու ամրագրել որոշակի հաջողություններ: Մինչդեռ ամենամեծ նվերը ոլորտում առկա խնդիրների մասին խոսելն ու դրանց լուծում տալն է: Մեր դաշտում խնդիրները բազմաթիվ են: Գրագողությունից մինչեւ էթիկայի եւ հարց տալու մշակույթի բացակայություն:

Վերջին շրջանում նկատելի է էլեկտրոնային կայքերի ահռելի քանակություն: Այդ կայքերում աշխատող լրագրողներից շատերը ոչ միայն մասնագիտական համապատասխան կրթություն չունեն, այլեւ հիմնականում վերածվում են սղագրողների՝ օրական 4 ասուլիս, յուրաքանչյուր ասուլիսից 5 փոքրիկ լուր եւ վերջ:

Նրանց թվում է, թե լրագրությունը հենց դա է՝ ասուլիսից ասուլիս վազելն ու պուճուրիկ լուրեր հրապարակելը: Սա, բնականաբար, գցում է լրատվական դաշտ կոչվածի անունը, հեղինակությունն ու որակը: Ռեյտինգ ապահովելու համար լրատվական կայքերի մի ստվար հատվածն օգտագործում է Քիմ Քարդաշյանի անունն ու լուսանկարները կամ էլ սեքսուալ բնույթի հրապարակումներ: Հաճախ էլ գրում են շատ սուր մի վերնագիր, որը չի համապատասխանում հոդվածին: Օրինակ՝ «Աշխարհը հրաժեշտ կտա Լեոնարդո դի Կապրիոյին» վերնագրով հոդվածը ենթադրում է, որ հոլիվուդյան դերասանը մահացել է: Սակայն նյութը բացելուց կարդում ես ընդամենը 2 նախադասություն, որ դերասանը որոշել է 50 տարեկանից հետո այլեւս չնկարահանվել ֆիլմերում:

Վերոնշյալ կայքերին ու թերթերին զուգահեռ կան նաեւ այնպիսիք, որոնց նշաձողն ավելի բարձր է, եւ որտեղ հոդվածները տպագրվում են առանց խեղաթյուրումների, սակայն հասարակ ընթերցողի աչքին մամուլը մնում է մամուլ՝ առանց առանձնահատկությունների ու նշաձողերի: Օրինակ՝ ԱՄՆ-ում, Եվրոպայում եւ Ռուսաստանում հստակ տարանջատում կա՝ դեղին մամուլ եւ մամուլ: Ե՛վ ընթերցողները, ե՛ւ մամուլի ներկայացուցիչները գիտեն, թե որ թերթը կամ կայքն է դեղին մամուլի ներկայացուցիչ, որը՝ ոչ: Մեզ մոտ շատ հաճախ այդ երկուսը միաձուլվում են եւ «թերթերը գրում են

Շարունակությունը՝ էջ 5

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ● 15 ՄԱՅԻՍԻ 2013Թ ● № 12 (285)

ԳԱՌՆԻԿ ԽՈՋԱԲԱՂՅԱՆ. «Մեծագույն սխալ է հանքարդյունահանումը մասնավոր ընկերություններին վստահելը»

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

Լույս է տեսել Գառնիկ Խոջաբաղյանի «Մեղրու մետաղի հանքավայրերը» մենագրությունը, որի շնորհանդեսը, սակայն, տեղի ունեցավ ոչ թե Մեղրիում, այլ Գորիսում (27 ապրիլի 2013թ.): Մենագրության առանձին բաժիններ, անշուշտ, կհրապարակենք երբեւէ: Բայց, օգտվելով առիթից, ճանաչված երկրաբանի հետ փորձեցինք պարզաբանել Մեղրու հանքային շրջանին առնչվող մի քանի հարց:

– Պարո՛ն Խոջաբաղյան, նախ՝ համառոտ ներկայացրեք, խնդրեմ, Ձեր նոր մենագրության բովանդակությունը:

– Այդ մենագրությունը լուսաբանում է Մեղրու շրջանի երկրաբանական կառուցվածքի, մագմատիզմի, ենթամարմնային եւ մետաղաերեւակման մի շարք հարցեր: Գրքում շարադրված է հայտնի ծննդավայրերի ու հայտածված հանքաերեւակումների, հանքային դաշտերի կառուցվածքային-երկրաբանական տվյալները: Բնութագրված է կեղեւաբանական եւ կառուցվածքային գործոնների ազդեցությունը տարբեր ծագումնային տիպերի շահագործման տեղայնացման վրա: Մի շարք նշաններով (հիդրոջերմային պրոցես, մագմատիզմի դրսեւորում, տարբեր մետաղների հանքային առկայություն եւ այլն) հաստատված է Շիշկերտ-Գիրաբաղյան խորքային խզվածքի եւ դրա հետ կապված կտրվածքային խախտումների հանքավերահսկիչ դերը եւ որոշված է դրանց դերը շահագործման վերահսկման մեջ: Գիրքը նախատեսված է հարավային Զանգեզուրում աշխատող երկրաբան-որոնողների եւ հետախուզողների լայն շրջանակի համար:

– Մոտ երեսուն տարի երկրաբանական աշխատանք եք կատարել Մեղրիում: Եվ, կարծում ենք, կարող եք բնութագրել Մեղրու երկրաբանական շրջանը՝ օգտակար հանածոների պաշարների առումով: Կուզենայինք իմանալ նաեւ, թե երեք տասնամյակ տեւած երկրաբանական աշխատանքներն ինչ արդյունքներ են արձանագրել:

– Մինչեւ 1962թ. Մեղրու շրջանում երկրաբանական աշխատանքներն ուղղված են եղել հիմնականում պղնձի եւ մոլիբդենի որոնմանը: Եվ բոլոր աշխատանքները կատարվել են Դիբագի խորքային խզման տարածքում: Արդյունքում արձանագրվել է, որ այդ խզման վրա գոյություն ունեն պղնձի եւ մոլիբդենի մի շարք հանքավայրեր՝ Ագարակ, Այգեձոր, Ջինդարա (Լիճք), Քաջարան, Դաստակերտ: Այդ ժամանակ Մեղրու գլխավոր երկրաբանը եղել է Լեւոն Տեր-Աբրահամյանը, ում առաջարկությամբ էլ 1961-ին Մեղրիում սկսվել է կվարցի երակների նմուշարկման աշխատանքը՝ ոսկի հայտնաբերելու նպատակով: Այդ աշխատանքը հաջողությամբ պսակվեց եւ հայտնաբերվեց Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրը: Միաժամանակ, մեղրեցի ակադեմիկոս կար՝ Սերգեյ Սեդրակի Մկրտչյան. նա ուսումնասիրեց Մեղրու արեւելյան մասից (Շիշկերտից) մինչեւ Գիրաթաղ ընկած խզվածքը եւ հայտնաբերեց ալեոզոյի նստվածքներ (դրան էր նվիրված նրա դոկտորական դիսերտացիան): Այդ վերջին հայտնաբերման արդյունքում փոխվեց Մեղրու շրջանի երկրաբանական կառուցվածքի մասին մեր պատկերացումը:

– Ինչո՞վ էր պայմանավորված Մեղրու շրջանում այդքան հետեւողականորեն իրականացվող երկրաբանական-որոնողական աշխատանքը, հո չենք ասի, որ Հայաստանի բոլոր շրջաններում նման մանրամասնությամբ եւ ինտենսիվությամբ երկրաբանական-որոնողական աշխատանքներ էին տարվում խորհրդային տարիներին:

– Այդ տարիներին երկրաբանական աշխատանքների արդյունքում հիմնավոր կարծիք էր ձեւավորվել, ըստ որի՝ Մեղրու շրջանը հանդիսանում է Խորհրդային Միության ամենալավ ուսումնասիրված շրջաններից մեկը եւ ամենահանքային ու ամենահետազոտված շրջանը Կովկասում: Ի դեպ, բոլոր ուսումնասիրությունների արդյունքները հաստատվում էին Մոսկվայում՝ հանքային պաշարների վերաբերյալ տեղեկատվությունը տնօրինող կոմիտեում: Բայց այն ժամանակ Զանգեզուրի հանքային շրջանում շահագործվեցին միայն Ագարակի, Քաջարանի եւ Դաստակերտի հանքավայրերը:

– Եթե Մեղրին այդքան ուսումն-

Շարունակությունը՝ էջ 4



ԱՅՑԵԼՈՒՄ

Գառնիկ Խոջաբաղյան, ծնվել է 1929թ. Գորիսում: 1949թ. ավարտել է տեղի N1 (հետագայում՝ Ա.Բակունցի անվան) միջն. դպրոցը: Այնուհետեւ ընդունվել է Երեւանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը, որն ավարտել է 1954թ.՝ երկրաբանի մասնագիտությամբ: Աշխատել է Թուքմենստանի երկրաբանական վարչության Կուգետանգի արշավախմբում (1954-60թթ.)՝ երկրաբան, ավագ երկրաբան, ջոկատի պետ: 1960թ. վերադարձել է Հայաստան, գործուղվել Մեղրի, որտեղ եւ մոտ 30 տարի աշխատել է երկրաբան: Այդ ընթացքում Մեղրու շրջանի տարածքում կատարել է քարտեզագրական աշխատանք (1:10000 մասշտաբի), որն օգտակար հանածոների որոնման հիմք է հանդիսանում առայսօր: 1980թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Մեղրու շրջանի հարավ-արեւելյան մասի երկրաբանական կառուցվածքը. օգտակար հանածոները եւ մագմատիզմը»: Երկու տարի աշխատել է նաեւ Զանգեզուրի արշավախմբում: Երկրաբանական աշխատանքը թողել է 1995-ին, բայց շարունակում է գիտական գործունեությունը: Ներկայումս բնակվում է Երեւանում:

Մեղրիում չորանում են ընկուզենիները եւ կորիզավորները, վտանգ է սպառնում նաեւ նռնենուն ու թզենուն

ԿԱՏԱԿԼԻԶՄ

Սկիզբը՝ էջ 1

Ի՞նչ միջոցների են դիմել այն ժամանակ:

– Այն ժամանակ, բարեբախտաբար, հիվանդությունները չխորացան: Մենք էլ հողօգտագործողների համար մի շարք համայնքներում ուսուցողական, խորհրդատվական դասընթացներ ու սեմինարներ անցկացրինք…

– Ես նորից պիտի Ձեզ ընդհատեմ. մի՞թե սեմինարներով, խորհրդատվական դասընթացներով հիվանդությունների առաջն առել եք, երբ նույնիսկ չգիտեք, թե խոսքն ինչ հիվանդությունների մասին է: Իսկ մենք ստիպված ենք ենթադրել, որ 2011 եւ 2012 թթ. հիվանդությունները վերացել են ինքնըստինքյան… Լավ, ուրիշ ո՞ր ծառատեսակների մոտ են հիմա նկատվում այդ հիվանդությունները:

– Հիվանդությունները եւ վնասատուները հիմնականում հայտնի են: Ուղղակի նրանց դեմ պայքարի ֆենոլոգիական (անցումային) փուլերի ժամկետների եւ անհրաժեշտ ու արդյունավետ թունաքիմիկատների հարցը պետք է ճշտվի գիտական կենտրոնների մասնագետների կողմից, քանի որ մեր տարածաշրջանում խորն արմատներ են գցել մելանկոնիում, բնափայտի քաղցկեղ, բնափայտի փտում, սնկային եւ արմատային քաղցկեղ, վիրուսային (բակտերիալ) արմատային հիվանդությունները: Եվ այդ հիվանդությունները սպառնում են ոչ միայն ընկուզենիներին, այլեւ բոլոր կորիզավորներին ու հնդավորներին:

– Ի՞նչ պետք է անել:

– Պետք է, նախեւառաջ, հիմնավորապես ուսումնասիրել այդ երեւույթը, ախտորոշել այն, որից հետո համապատասխան միջոցներ ձեռնարկել: Առանց հիվանդության առաջացման ստույգ պատճառներն իմանալու, առանց պետական մակարդակի աջակցության չենք կարող կանխել դա: Եթե այսպես շարունակվի, ընկուզենու գենոֆոնդը կկորցնենք, քանի որ վիճակն աստիճանաբար մոտենում է կրիտիկականին:

– Ծառերի այդ հիվանդությունները, ինչպես նշեցիք, նկատվել են մեկ-երկու ամիս առաջ, ի՞նչ է կատարվել այդ ընթացքում: Գոնե հանրապետության գյուղնախարարը տեղյա՞կ է, որ Մեղրիում մի քանի ծառատեսակներ վերանում են:

– Չեմ կարող ասել՝ գյուղնախարարը տեղյա՞կ է, թե՞ ոչ: Բայց ստույգ կարող եմ ասել, որ նշված հիվանդությունները բուժելու համար առայժմ որեւէ հիմնարար աշխատանք չի կատարվում, իսկ հիվանդությունները խորանում են: Կարող եմ ասել նաեւ, որ տեղական ուժերով հնարավոր չէ ինչ-որ արդյունքի հասնել:

– Կա՞ն այլ հիվանդություններ եւ վնասատուներ, որոնք այսօր սպառնում են Մեղրու շրջանի պտղատու ծառերին:

– Շատ մեծ տարածվածություն ունեն անդրկովկասյան մարմարյա բզեզը, Մեղրու կեղծ գնդաձեւ վահանակիրները, նռնենու եւ թզենու հրաթիթեռները, արեւելյան պտղակերն ու արքայանարնջի ճյուղերի չորացում վիրուսային հիվանդությունները, որոնք հատկապես վտանգ են ներկայացնում մերձարեւադարձային պտղատու կուլտուրաների եւ մասնավորապես հնդավորների ու կորիզավորների համար:

– Եվ ի՞նչ կարելի է անել այդ հիվանդությունները կանխելու համար:

– Դա կարելի է բուժել՝ հետեւողական լինելու դեպքում: Կան համապատասխան թունաքիմիկատներ, որոնց ձեռք բերելը խնդիր չէ: Մենք համագործակցում ենք «ԱՐՏԱԳՐՈ» ՍՊԸ-ի հետ (նաեւ միջոցառումներ ենք ներկայացնում այդ ընկերությանը), եւ այդ ընկերությունն օգնում է շատ գյուղացիական տնտեսությունների: Մնում է, որ մարդիկ ցանկություն ունենան, չծուլանան եւ ժամանակին խնամեն ծառերը, որ հիվանդություններն ու վնասատուները ծառերին վնաս չպատճառեն:

Հարցազրույցը՝
ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆԻ

լուրեր

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2013թ. մայիսի 8-ի հրամանագրով, Երկրապահի օրվա կապակցությամբ, Սյունիքի մարզպետ, ԵԿՄ Սյունիքի մարզային խորհրդի նախագահ Սուրեն Խաչատրյանը պարգեւատրվել է «Մարտական խաչ 2-րդ աստիճանի» շքանշանով: Նույն պարգեւին են արժանացել ԵԿՄ Մեղրու տարածքային բաժանմունքի անդամ Գեւորգ Աթոյանը, ԵԿՄ Սիսիանի տարածքային բաժանմունքի անդամ Մարտիկ Գաբրիելյանը, ԵԿՄ Կապանի տարածքային բաժանմունքի անդամ Ղարիբ Հովհաննիսյանը, ԵԿՄ Գորիսի տարածքային բաժանմունքի անդամ Արարատ Շահվերդյանը: ՀՀ նախագահն այդ հրամանագիրը ստորագրելիս առաջնորդվել է ՀՀ սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով եւ հիմք է ընդունել «Հայաստանի Հանրապետության պետական պարգեւների մասին» ՀՀ օրենքը:

Մայիսի 3-ին Մեղրիում էր ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության աշխատանքային խումբը, որը համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում քննարկեց Մեղրիում հիվանդանոցի նոր շենքի կառուցման նպատակահարմարությունը: Հանդիպման մասնակիցները, գրեթե առանց բացառության, դեմ արտահայտվեցին հիվանդանոցի նոր շենքի կառուցման ծրագրին եւ առաջարկեցին հիմնանորոգել հիվանդանոցի հին շենքը: Ըստ մեղրեցիների՝ կան մի շարք փաստարկներ, որոնք անկարելի են դարձնում համայնքի վարչական տարածքում հատկացված տեղում նոր հիվանդանոցի կառուցումը: Իսկ հիվանդանոցի հին շենքը, որ դատարկվել է 2010-ին, շարունակում է ունենալ անորոշ կարգավիճակ, թեեւ բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ հավաստիացրել են, որ այն կհանձնվի Մեղրու համայնքին՝ բնակելի դարձնելու եւ անապահով ու երիտասարդ ընտանիքներին տրամադրելու նպատակով: Անորոշ կարգավիճակում են հայտնվել նաեւ Ագարակի նախկին հիվանդանոցի երկու մասնաշենքը (նախկինում՝ ծննդատուն եւ ինֆեկցիոն բաժին):

ՀՀ ֆինանսների նախարարը 6-ամսյա ժամկետում ՀՀ կառավարություն պետք է ներկայացնի Մեղրի համայնքի վարչական սահմաններում խաղատուն կամ շահումով խաղ կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղ իրականացնող կազմակերպությունների նկատմամբ պահանջների եւ չափանիշների նախագիծը: Այդ մասին ՀՀ կառավարության որոշումն ընդունվել է մայիսի 2-ին: Այսպիսով՝ Մեղրին կդառնա չորրորդ քաղաքը, որտեղ կթույլատրվի խաղատների հիմնումը, Ջերմուկից, Սեւանից եւ Ծաղկաձորից հետո: Նշենք, որ 2014թ. հունվարի 1-ից ՀՀ տարածքից բոլոր այն խաղատները, որտեղ համապատասխան չափանիշների համապատասխան խոշոր ներդրումներ (առնվազն 40 մլրդ դրամ) չեն իրականացվել, պետք է տեղափոխվեն Ջերմուկ, Սեւան եւ Ծաղկաձոր: Նախապես որոշված էր, որ այդ տեղափոխումը պետք է կատարվի 2013թ. հունվարի 1-ից, սակայն այնուհետ գործընթացը 1 տարով հետաձգվեց: Մեղրիում խաղատների գործունեությունը թույլատրելու ծրագիրը, սակայն, ոչ միանշանակ է ընդունվել այդ համայնքում: Ոմանք այն կարծիքն են արտահայտում, որ խաղատների ծառայությունից ամենաքիչն օգտվելու են տեղացիները: Գիշերային կյանք ենթադրող խաղատները, նախեւառաջ, ծառայելու են դրսից եկողների հաճույքների բավարարմանը:

² èàÔæ² ä ²ÐàôÂÚàôÜ

Ժողովրդի սերը՝ ամենաբարձր գնահատական

Հարցազրույց «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ սրտաբան, բժշկական գիտությունների թեկնածու Սվետլանա Իսախանյանի հետ

Սիսիանի բժշկական կենտրոնի ընդհանուր թերապեւտիկ բաժանմունքի վարիչ Սվետլանա Իսախանյանը ծնվել է Գորիսում, 1951 թվականին: 1965-66 ուստարում ոսկե մեդալով ավարտել է Գորիսի N2 միջնակարգ դպրոցը, 1972թ. գերազանցության դիպլոմով՝ Երեւանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: Շուրջ 1.5 տարի աշխատել է Գորիսի շրջանային հիվանդանոցում՝ թերապեւտ: 1975 թվականից աշխատում է «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ թերապեւտ, այնուհետ՝ սրտաբան: Աշխատանքային տարիների ընթացքում, մասնագիտական որակավորումը բարձրացնելու նպատակով, բազմիցս վերապատրաստվել է Երեւանում, Սրտաբանության գիտահետազոտական կենտրոնում, Առողջապահության ազգային ինստիտուտում, Հայաստանի առիթմոլոգիական սրտաբանական «ՀԱՍԿ» կենտրոնում, առաջին համալսարանական կլինիկայում, Մոսկվայում՝ Մյասնիկովի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտում եւ այլն: 1990 թվականից ունի բարձր կատեգորիայի թերապեւտի որակավորում: 1992թ. Երեւանի սրտաբանության ինստիտուտում պաշտպանել է «Զարկերակային հիպերտենզիայի ոչ դեղորայքային բուժման արդյունավետությունը» գիտական թեզը եւ բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի կողմից ստացել բժշկական գիտությունների թեկնածուի աստիճան: Ունի սրտաբանի արտոնագիր: Առողջապահության համակարգում մասնագիտական բազմամյա ծառայության եւ աշխատանքային գնահատելի հաջողությունների համար առողջապահության նախարարության կողմից բազմիցս արժանացել է պատվոգրերի եւ շնորհակալագրերի:

Սվետլանա Իսախանյանի ընտանիքում բոլորը բժիշկներ են. ամուսինը՝ «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն, վիրաբույժ Արտյոմ Թադեւոսյանն է, որդին՝ Երեւանի «Շենգավիթ» բժշկական կենտրոնի անոթային վիրաբույժ, բժշկական գիտությունների թեկնածու Արա Թադեւոսյանն է, եւ դուստրը՝ հանրային առողջապահության կազմակերպիչ Անահիտ Թադեւոսյանն է:

Բնակչության առողջության պահպանման առաջին երաշխիքը Սվետլանա Իսախանյանը պայմանավորում է պետության հզորացմամբ, տնտեսության զարգացմամբ, ժողովրդի սոցիալ-կենցաղային բարեկեցությամբ, ազգաբնակչության շրջանում առողջապահությունը որպես մշակույթ ամրագրելով:

Մարդկանց տածած վստահությունը, նրանց սերն ու հարգանքը Սվետլանա Իսախանյանը համարում է իր աշխատանքային գործունեության մեծագույն նվաճումն ու ամենաբարձր գնահատականը, եւ նույն փոխադարձ սիրով ու անսահման նվիրումով՝ պատրաստ է միշտ ծառայել իր սիրելի ժողովրդին:

Նա իր մասնագիտական հաջողությունները մեծապես պայմանավորում է Սիսիանի բժշկական կենտրոնի ողջ անձնակազմի նվիրական աշխատանքով, կոլեկտիվի միասնությամբ ու համերաշխությամբ:

– Տիկին Իսախանյան, ի՞նչ է Ձեզ համար բժշկի մասնագիտությունը: Արդյո՞ք այն սահմանափակվում է սոսկ հիվանդության կանխարգելմամբ, ախտորոշմամբ եւ բուժմամբ, թե՞…

– Դրանք, անշուշտ, կարեւոր նախապայման են, բայց բժշկի մասնագիտության եւ նրա պրակտիկ գործունեության մեջ շատ նրբերանգներ կան, որոնք ամեն օր՝ յուրաքանչյուր նոր հիվանդի հետ փոփոխվում, կատարելագործվում կամ, ինչպես ասում են, հարմարեցվում են տվյալ հիվանդի հոգեբանությանը, տարիքին, իրավիճակին, նրա հիվանդության փուլերին: Բժշկի մասնագիտությունը, նախեւառաջ, որքան էլ կրկնված թվա, ծայրաստիճան պատասխանատվություն է, քանի որ նրան են վստահվում մարդու համար ամենաթանկը՝ նրա կյանքն ու առողջությունը: Բժիշկը ոչ միայն պետք է բժշկագիտական խոր իմացությամբ օժտված լինի, նաեւ՝ կլինիկական մտածելակերպով: Նա պարտավոր է մինչեւ կյանքի վերջ սովորել, թարմացնել ու խորացնել բժշկական գիտելիքները, լինել տեղեկացված՝ ամեն րոպե զարգացող եւ փոփոխվող բժշկական աշխարհում: Այլապես նա հետ կմնա բժշկագիտությունից, կհեռանա իր մասնագիտությունից, կդոփի տեղում, եւ դա առաջին հերթին կնկատի հիվանդը: Այստեղից էլ առաջանում է հիվանդի՝ բժշկին վստահելու խնդիրը, առանց որի բժիշկն անլիարժեք է: Հիվանդը եթե արդեն չհավատաց, չվստահեց բժշկին, նրա ցուցումով բուժման կուրս սկսելն այլեւս անիմաստ է դառնում. հիվանդն ինքը կորցնում է հիվանդությանը դիմադրելու, հաղթահարելու կարողությունը: Էլ չեմ խոսում բժշկի, նման պարագայում, հեղինակության կորստի մասին: Բժշկի մասնագիտության մեջ, ուզում եմ ասել, անփոխարինելի դեր եւ նշանակություն ունի հիվանդի հավատը բժշկի հանդեպ, եւ վերջինս ամենաթանկարժեք դեղամիջոցն է, ամենամեծ սպեղանին հիվանդի համար: Բժիշկը չպետք է մոռանա, որ հիվանդին զննելուց առաջ, հիվանդը, ինչպես ասում են, իրեն է զննում, փորձում նրա վստահելիությունը:

– Տիկին Իսախանյան, ասում են՝ բժիշկը հիվանդությունը բուժելուց առաջ, նախ պետք է բուժի հիվանդին: Քանի որ Դուք նաեւ թերապեւտ եք եւ ապա՝ սրտաբան, ինչպե՞ս եք դիտում այս երեւույթը:

– Շատ լավ հարց է: Այո, նախքան սրտաբանական բժշկության մեջ վերապատրաստվելս, ես թերապեւտ եմ աշխատել, իսկ թերապեւտը բուժանձնակազմում առաջին եւ ամենակարեւոր անձն է, որին հիվանդը դիմում է: Եվ ընդհանրապես, բժշկության մեջ յուրաքանչյուր նեղ մասնագետ պետք է շատ լավ տիրապետի ընդհանուր բուժական գիտելիքների, առանց որոնց նեղ մասնագիտացումը թերի է: Բուժական գիտելիքներն ամեն ինչ են իրենց մեջ պարունակում՝ հիվանդը, հիվանդությունը եւ նրա հոգեբանությունը: Պատկերացրեք այն բժշկին, ով, ասենք, սրտի, լյարդի, թոքի կամ անոթների նեղ մասնագետ է: Ինչպե՞ս կարող է նա բուժել հիվանդի սիրտը, եթե տեղեկացվածություն չունենա նրա ստամոքսաաղիքային տրակտի, անոթների, ողջ օրգանիզմի օրգանների եւ նրանց գործունեության մասին: Այդ ամենն իրար հետ շաղկապված է: Երբեմն հիվանդի մատը կարող է ցավել, բայց պարզվի, որ նա շատ ավելի լուրջ խնդիր ունի, քան առաջին հայացքից կարող է թվալ: Կամ՝ բժիշկը, չարաչար սխալվելով, կարող է բուժման կուրս նշանակել ստամոքսի համար, մինչդեռ հիվանդը սրտամկանի ինֆարկտ ունենա արդեն ստացած: Այս վրիպումները կարող են ճակատագրական դառնալ հիվանդի կյանքի եւ առողջության համար, եթե բժիշկը լիարժեք տեղեկություն չունի հիվանդի օրգանիզմի ողջ համակարգի վերաբերյալ: Յուրաքանչյուր մարդ ինքը տիեզերքի պես է. համաձույլ, ամբողջական եւ ներդաշնակ: Բժիշկն իրավունք չունի հիվանդի օրգանիզմի ներդաշնակությունը խաթարել, առավել եւս նեղ մասնագետը չպետք է, այսպես ասած, մտահոգված լինի միայն իրեն «պատկանելիք» օրգանով՝ առանց հաշվի առնելու մյուս օրգանների վիճակը, նրանց փոխկապակցվածությունը: Կարող է թվալ, թե հարցից շեղվեցի, բայց դա այդպես չէ. ես մոտենում եմ Ձեր հարցին: Ի՞նչ է նշանակում բուժել հիվանդին եւ հետո միայն՝ հիվանդությունը: Հիվանդը, մարդն առհասարակ, չի կարող տարանջատված լինել իր հիվանդությունից, իր օրգանիզմում կատարվող երեւույթներից: Նա սկսում է համապատասխան հոգեբանություն ձեռք բերել, երեւան են գալիս վախի, սթրեսի, ընկճվածության կամ հոռետեսության գործոնները, եւ, այդ ամենով հանդերձ, նա դիմում է բժշկին: Հիվանդի հոգին ալեկոծված է, հաճախ ոչ այնքան հիվանդությունն է նրա մեջ խորացված լինում, որքան՝ նրա տագնապը կամ ընկճվածությունը: Այս դեպքերում է, երբ բժիշկը հոգեբանական միջոցներ է ձեռնարկում եւ առաջին հերթին բուժում հիվանդին, թոթափում նրա վախերը, հույս ներշնչում եւ ապա միայն՝ անցնում հիվանդության բուժմանը: Ի վերջո, հիվանդի եւ հիվանդության բուժումն ընթացքում զուգահեռվում, լրացնում են միմյանց: Մեր պրակտիկայում եղել են դեպքեր, երբ հիվանդն իրականում լուրջ խնդիր չի ունեցել, բայց վախով եւ կասկածով ներշնչված՝ դիմել է մեզ: Իր գործի մասնագետ բժիշկը նախ «ախտորոշում» է հիվանդի սովորույթները, անհատական հատկանիշները, բնույթն ու բնավորությունը եւ հետո միայն եզրահանգում կատարում հիվանդության, նրա ընթացքի, բուժման արդյունավետության մասին: Մի խոսքով, լավ բժիշկը միայն հիվանդի հետ անկեղծ եւ սրտացավ զրուցելով՝ կարող է կարծիք կազմել հիվանդի եւ նրա հիվանդության պատմության մասին:

Հեշտ չէ բժշկի աշխատանքը, պատահական չէ, որ բոլոր մասնագիտությունների մեջ բժշկական կրթությունն ամենատեւականն է եւ ամենադժվարինը: Միայն բժշկական կրթությունը դեռեւս բավարար չէ որակյալ եւ ժամանակակից բժիշկ լինելու համար. բժիշկ մասնագետին անհրաժեշտ են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են հոգատարությունը, նրբանկատությունը, անձնվիրությունը, անսահման բարությունը, ուրիշին օգնության հասնելու ձգտումը, ներքին բարձր կուլտուրան: Ինչպես մի նշանավոր բժիշկ է ասել՝ «Միայն բժշկություն իմացող բժիշկը նույնիսկ բժշկություն էլ չգիտի»: Բժիշկը գործ ունենալով մարդու, նրա կյանքի ու առողջության հետ, պետք է հրաշալի տիրապետի հիվանդի հոգեբանությանը, միջանձնային հարաբերությունների նրբություններին, լինի չափազանց ներողամիտ եւ նրբանկատ:

Քանի որ շատ տարողունակ է հարցը եւ ընդարձակվելու դեպքում՝ ամբողջ բժշկագիտությունը կներառի, ուստի, ավելի ճիշտ կլինի, որ այն ամփոփեմ այսպես. բժիշկը չի կարող բուժել հիվանդի մարմինը՝ չբուժելով նրա հոգին: Ի վերջո, հիվանդը պետք է հոգեպես թեթեւանա՝ բժշկի հետ զրուցելով, հակառակ դեպքում, այդ բժիշկը բժիշկ չէ: Բժշկության մեջ, իմ խորին համոզմամբ, հիմնական դեղամիջոցը բժիշկն է:

– Տիկին Իսախանյան, այսպիսի մի ասույթ կա. լավ բժշկին, ինչպես լավ կապիտանին, իրավամբ ճանաչում են փոթորկի ժամանակ, վտանգի րոպեներին: Նման պահերին, Ձեր կարծիքով, ինչպե՞ս պետք է իրեն պահի իսկական բժիշկը, եւ արդյո՞ք հեշտ է բժշկի համար միշտ հավասարակշռված վիճակ պահպանելը: Բժիշկը կարո՞ղ է այնքան «սառնանալ», որ այլեւս նրա համար սովորական դառնան անցանկալի՝ մահվան ելքով դեպքերը:

– Համեմատությունը տեղին էր. լավ բժիշկը եւ վտանգի պահին նավի կամ ռազմի կապիտանը նույնն են: Նման պահերին բժշկին չպետք է լքեն զսպվածությունն ու վստահություն ներշնչող խաղաղությունը: Բժիշկն, ամենածանր պահին անգամ, չպետք է կորցնի իր հավասարակշռությունը: Նա իրավունք չունի խուճապի մատնվել՝ ամենատխուր կասկածների դեպքում անգամ: Նա պետք է գործի հստակ, պայծառ մտքով, լավատեսական տրամադրությամբ, արագ եւ ճկուն միջոցներով: Այլ կերպ ասած՝ բժիշկը երբեք չպետք է կորցնի իրեն եւ անզոր մի կողմ քաշվի: Նա պետք է մինչեւ վերջ պայքարի հիվանդի կյանքի ու առողջության համար, որպեսզի եւ՝ իր խիղճը հանգիստ լինի, եւ՝ հիվանդին շրջապատող մարդկանց մեջ բժշկի հեղինակությանն ուղղված կասկածի որեւէ ստվեր չառաջանա: Նա երբեք չպետք է կորցնի իր հավատը. վերջին պահին անգամ, ամենաանհուսալի իրավիճակում, կարող է հանկարծ հրաշք տեղի ունենալ եւ իրավիճակը կտրուկ շրջադարձվել: Շատ դեպքերում է, որ բժիշկը վտանգից դուրս է գալիս հաղթանակած եւ հիմնականում՝ իր լավատեսության, չհուսալքվելու, հավասարակշիռ գործելակերպի շնորհիվ: Պատահում են դեպքեր, երբ բժիշկը ներքուստ չի հավատում, որ հիվանդը կբարձրանա անկողնուց, բայց նա դարձյալ կարողանում է լավատեսություն ներշնչել հիվանդին եւ նրա հարազատներին ու … հրաշք է տեղի ունենում. հիվանդը փրկվում է: Այնպես որ մեր մասնագիտությունը լի է նաեւ հրաշքներով, եւ այդ հրաշագործության առաջին հեղինակն իսկական բժիշկն է: Ինչ վերաբերում է բժշկի «սառնանալուն»՝ բազում անցանկալի դեպքեր տեսնելուց, «գլխովն անցնելուց» հետո, ասեմ, գոնե իմ պարագայում, դա այդպես չէ, եւ, կարծում եմ, շատշատ բժիշկներ կան, ովքեր ինձ պես են մտածում: Երբեմն բժշկի զսպվածությունը կարող է սխալ հասկացվել կամ ընկալվել հիվանդի եւ նրա հարազատների կողմից: Նրանք դա կարող են համարել սառնություն, կամ, որ ավելի վատ է՝ անտարբերություն: Բժիշկն ինքն էլ մարդ է՝ ավելի քան (եւ պարտավոր է այդպիսին լինել) եւ իր մեջ է կրում տասնյակ հարյուրավորների ճակատագրերը, նրանց տխրությունն ու հուսահատությունը, նրանց ուրախությունները, կյանքի զարթոնքները: Իսկ մարդն ինքը բնույթով զգացմունքային, հուզական արարած է: Հաճախ բժիշկն ավելի ծանր է տանում հիվանդի կորուստը, քան կարող է թվալ առաջին հայացքից: Պարզապես դա բավարար չափով չի երեւում, որովհետեւ միայն բժշկին են հայտնի իր անքուն գիշերները, լուռ տառապանքը, մտորումները, ինքնախարազանումը, եթե վրիպել կամ անտեսել է փոքրիկ, բայց կարեւոր մանրուք, սովորական մարդկային ցավը՝ հիվանդի համար: Այնպես որ անցանկալի երեւույթն ամենավատն է, որ կարող է տեղի ունենալ բժշկի կյանքում: Դա լուրջ փորձություն է բժշկի համար, եւ յուրաքանչյուր ծանր դեպքից հետո բժիշկը նորից նույն հոգեկան ապրումներն է ունենում, եւ դրանք երբեք չեն կարող սովորական դառնալ՝ թեկուզ այն պատճառով, որ

Շարունակությունը՝ էջ 5

Այսնյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ● 15 ՄԱՅԻՍԻ 2013Թ ● № 12 (285)

ԳԱՌՆԻԿ ԽՈՋԱԲԱՂՅԱՆ.
«Մեծագույն սխալ է հանքարդյունահանումը մասնավոր ընկերություններին վստահելը»

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

Սկիզբը՝ էջ 2

նասիրված տարածք է (նաեւ Ձեր մասնակցությամբ), ապա չի կարող, որ Դուք չիմանաք մեղրեցիներին ներկայումս մտահոգող մի հարցի պատասխանը՝ արդյո՞ք Մեղրու շրջանում ուրանի պաշարներ են հայտնաբերվել, թե՞ ոչ:

– Ոչ:

– Իսկ Տաշտունո՞ւմ:

– Տաշտունում երկրաբանական աշխատանքներ են կատարվել 1962-63թթ.: Աշխատանքների ընթացքում պարզ է դարձել, որ այդ տարածքում ռադիացիոն (ճառագայթային) ֆոնը սահմանված նորմայից (8-12 ռենտգեն) բարձր է, ինչի համար (նաեւ այն պատճառով, որ այնտեղ ուրանի պաշարներ չհայտնաբերվեցին) աշխատանքները դադարեցվեցին:

– Իսկ եթե ուրանի պաշարներ չեն եղել, ապա ինչո՞վ էր պայմանավորված ճառագայթային բարձր ֆոնի առկայությունը:

– Դա պեգմատիտային երակների առկայության հետեւանք էր:

– Իսկ եթե հիմա՝ այսօր, նորից հողի շերտը ճեղքում ենք եւ ուրիշ մետաղներ որոնում այնտեղ՝ արդյո՞ք կրկին իրեն հիշեցնել չի տա պեգմատիտային երակը, արդյո՞ք նորից ճառագայթային ֆոնն այնտեղ չի բարձրանա սահմանված նիշից:

– Ես չեմ կարող պատասխանել Ձեր հարցին, պետք է տեղում ուսումնասիրություն կատարել:

– Թեեւ Դուք ասում եք, որ Մեղրին հանքային պաշարների առումով ամենաուսումնասիրված շրջաններից մեկն էր Խորհրդային Միությունում, բայց Ձեր իսկ ասածից ենթադրում ենք, որ երկրաբանական աշխատանքները Մեղրիում ավարտված չեն:

– Ճիշտ եք նկատում: Դեռեւս կա մոտ 40 երեւակում, որ ենթակա է ուսումնասիրման, թեեւ չեմ կարող ասել, թե դրանցից քանիսը վերջնական արդյունքում կարող է դառնալ շահագործման համար նպատակահարմար հանքավայր: Միաժամանակ՝ քիչ հավանական եմ համարում, որ որեւէ մեկը գումարներ հատկացնի երկրաբանական ուսումնասիրությունների համար: Հիմա բոլոր հանքավայրերը շահագործվում են նախկին ուսումնասիրությունների հիման վրա՝ շատ քիչ բացառությամբ: Իմ կարծիքով՝ պետք է շարունակել երկրաբանական աշխատանքներն այն երեւակումներում, որոնք հայտնաբերվել են մինչեւ 1990թ.: Շիշկերտ-Գիրաթաղ խզվածքում հնարավոր է, օրինակ, որ լինեն շատ հանքավայրեր, անգամ մի նոր Քաջարան…

– Որքանո՞վ են փոխվել երկրաբանական աշխատանքների մեթոդները, սկզբունքները՝ համեմատած այն տարիների հետ:

– Բավականին շատ են փոխվել: Օրինակ, ոսկու հանքավայրերում 1տ հանքաքարի մեջ պետք է լիներ առնվազն 5գ ոսկի, որպեսզի շահագործվեր հանքավայրը: Հիմա ամենաքիչ պարունակությամբ հանքավայրն էլ շահագործվում է: Կորզման տեխնոլոգիան է փոխվել, կորզման տոկոսն է մեծացել եւ հասել մինչեւ 90-ի: Դա՝ նաեւ քիմիական տարբեր նյութերի օգտագործման շնորհիվ:

– Դուք ասում եք՝ պետք է շարունակել երկրաբանական-որոնողական աշխատանքները Մեղրիում երեւակված 40 հանքավայրում: Դուք նաեւ գիտեք, թե որքան հանքավայր է այնտեղ հիմա շահագործվում եւ որքան հանքավայր են շահագործման պատրաստում: Բայց չեք ասում՝ կդիմանա՞ Մեղրին աննախադեպ այդ գրոհին:

– Մեղրին, անկեղծ լինենք, հիմա էլ չի դիմանում: Դուք գիտե՞ք, օրինակ, թե Լիճքվազ-Թեյում տարիներ շարունակ ինչպես է արդյունահանվել ոսկին: Մեզանում, ցավոք, ոսկին հիմնականում կորզվում է ցիանիտական կալիումի միջոցով, որ ամենաթունավոր նյութն է եւ որի թափոնն անպայման պետք է պահեստավորվի ջրահավաք ավազաններից հեռու վայրում: Պղինձ-մոլիբդենի խտանյութի մշակումն էլ կատարվում է տարբեր քիմիական նյութերի օգնությամբ՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Իսկ մենք ամբողջապես հասկանո՞ւմ ենք այդ ամենի հետեւանքները, թե՞… Այնպես որ, եթե ճիշտ չաշխատենք, ապա ո՛չ մարդը, ո՛չ էլ շրջակա միջավայրը չեն դիմանա: Հանքավայրը պետք է ճիշտ շահագործվի, բնապահպանական բոլոր նորմերը պետք է խստագույնս հաշվի առնվեն…

– Դուք ասացիք, որ Տաշտունում ուրան չի հայտնաբերվել: Իսկ Սյունիքում որտե՞ղ կան ուրանի պաշարներ:

– Եթե չեմ սխալվում, միայն Լեռնաձորում: Ես չգիտեմ էլ, թե վերջին տարիներին այնտեղ իրականացված որոնողական աշխատանքներն ինչ արդյունք տվեցին: Փոխարենը ստույգ կարող եմ ասել. եթե պիտի շահագործվի այդ հանքավայրը, ապա՝ միայն ստորգետնյա եղանակով. պաշարները գտնվում են 160մ խորության վրա: Ընդ որում՝ հանքաքարը պետք է լցվի հատուկ կոնտեյներներ եւ տեղափոխվի այլ վայր՝ մշակման համար, այլապես հանքավայրի շահագործումն անուղղելի վնաս կհասցնի տարածաշրջանին: 1960-ականներին Լեռնաձորի արշավախմբի ղեկավար Սուխորուչկինը շատ ժամանակ չանցած մահացավ ճառագայթահարումից:

– Եվ այդ ամենն իմանալով հանդերձ Դուք կարծում եք, որ երկրաբանական աշխատանքները պետք է շարունակվեն, եղած հանքավայրերը պետք է օգտագործվեն… Ու չեք ասում, թե ինչ ենք թողնելու գալիք սերունդներին, եթե բոլոր հանքավայրերը սկսենք շահագործել հենց այսօր: Չինաստանի եւ Չիլիի նման պետությունները, որքանով տեղյակ ենք, իրենց շատ հանքավայրերը չեն շահագործում, խնայում են եւ սեփական երկրի պահանջարկը բավարարում են այլ երկրներից խտանյութ ներկրելով, իսկ մենք…

– Եթե ունենք օգտակար հանածոներ, մետաղական հանքավայրեր, ապա ինչու չպետք է դրանք խելամտորեն, խոհեմաբար ծառայեցնենք մեր երկրին ու ժողովրդին: Խոսքս, իհարկե, շահագործման այն եղանակների, մեթոդների, մոտեցումների մասին չէ, որ այսօր կիրառում ենք: Ամբողջ հանքարդյունաբերությունը պետք է ազգայնացվի, հետո վերցվի մասնավոր ընկերություններից եւ հայտարարվի բացառապես պետական ոլորտ: Դա, ի դեպ, նաեւ ՀՀ սահմանադրության պահանջն է: Մեր հիմնական օրենքն ասում է՝ ընդերքը բացառապես պետությանն է պատկանում: Եվ եթե այդ ոլորտը լինի պետական սեփականություն, ապա պետությունն էլ կկարգավորի ե՛ւ պաշարների արդյունահանման ծավալները, ե՛ւ բնապահպանական հարցերը: Մեծագույն սխալ է հանքարդյունահանումը մասնավոր ընկերություններին վստահելը: Եվ ուրեմն՝ սկսենք այդ սխալը շտկելուց, այլապես ռիսկերն անընդհատ մեծանալու են…

Հարցազրույցը՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Բաց նամակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին

Բազմիցս դիմել եմ ՀՀ դատախազ պարոն Ա.Հովսեփյանին՝ Սյունիքի մարզի դատախազի տեղակալ Հայկ Կարապետյանի կողմից իմ եւ ընտանիքիս նկատմամբ կատարվող ապօրինությունների մասին:

Վերջինիս նման վարքագիծը ձեւավորվել է դեռեւս 2007-2008թթ., երբ իր եւ իմ միջեւ աշխատանքային տարաձայնությունների շուրջ ընդհանուր հայտարարի չգալով եւ իրեն մարզի տեր ու տիրական կարծելու հիվանդագին երեւակայության հետեւանքով մահու եւ կենաց պատերազմ հայտարարեց իմ դեմ: Ոտնահարելով ՀՀ սահմանադրության, օրենսդրության պահանջները, իրեն վերապահելով ՀՀ-ում ապահովագրական գործակալությունների գործունեությունն ապահովողի եւ նրանց ֆինանսական միջոցները հափշտակիչ գործակալներից փրկողի խիստ կասկածելի դերակատարումը, 14.04.2013թ. «ԱՐ» հեռուստատեսությամբ մեկ դերասանի թատրոնի կարգի, խղճուկ եւ զավեշտալի հաղորդում վարեց, որ իբրեւ Սիսիան քաղաքի բնակչուհի, «Ռոսգոսստրախ Արմենիա» ՓԲԸ-ի գործակալ Գայանե Դավթյանն իր աշխատանքի ընթացքում հավաքագրած ԱՊՊԱ գումարները մուտք չի արել ընկերության գանձարկղ եւ յուրացրել է: Դեռեւս 02.12.2011թ. կնոջս՝ Գայանե Դավթյանի աշխատավարձի քարտային հաշվից «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի «Սիսիան» մասնաճյուղի բանկոմատից գումար ելք անելու ժամանակ նկատեցինք, որ հաշվին առկա է 16 մլն դրամից ավելի գումար, մինչդեռ պետք է լիներ իր աշխատավարձը, մոտ 73 հազար դրամ: Վստահ լինելով, որ այդ գումարը չէր կարող լինել իրենը, անմիջապես տեղեկացրինք «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ «Սիսիան» մասնաճյուղի կառավարչին, եւ կինս հանձնեց աշխատավարձի քարտը, որը եւ հաստատել է նշածս մասնաճյուղի կառավարիչը 04.02.2013թ. թիվ 031-006 գրությամբ: Ավելին՝ բանկի աշխատակիցների անուշադրության կամ այլ պատճառով առաջացած հափշտակության հնարավորությունը կինս բացառել է եւ, գործելով միայն օրենքին համապատասխան, այն անմիջապես վերադարձրել է բանկին:

Գումարը կնոջս հաշվին լինելու փաստը տեղի է ունեցել նախքան իր նկատմամբ դատախազ Հ.Կարապետյանի կողմից քրեական գործ սարքելու պահը, այսինքն, նախքան քրգործի հարուցումը: Եթե կինս հանցագործ կամ յուրացնող լիներ, չէր հապաղի այդ գումարի մի մասով մարել «Ռոսգոսստրախ Արմենիա» ՓԲԸ-ի պարտքը, իսկ մյուս մասն էլ կօգտագործեր իր կարիքների համար:

Դատախազ Կարապետյանը, ոտնահարելով ՀՀ քրդատօր-ի սկզբունքները, անմեղության կանխավարկածը, ամբողջ հանրապետության առջեւ նսեմացրեց կնոջս բարի համբավը: Կնոջս ապօրինի կերպով քրեական պատասխանատվության ենթարկելու համար արհեստական ապացույցներ ստեղծելու եւ իրական ապացույցներ թաքցնելու հարցում նրան օժանդակել են ոչ պակաս հանցավոր անձինք. գործով քննիչ, ներկայիս ոստիկանության Սիսիանի քննչական բաժանմունքի պետ Ա.Ջավադյանը, կնոջս աշխատանքի վայրի տնօրեն, նույն դատախազ Հ.Կարապետյանի կին Նաիրա Ներսիսյանը. Կարապետյանի հեռուստատեսային շոուն պաշտոնեական դիրքի չարաշահման, քաղաքացիներին խաբելու եւ իրեն ստեղծված իրավիճակից փրկելու դասական օրինակ է:

Հիշեցնում եմ, ՀՀ քրեական օրենսգրքով հափշտակության, այդ թվում յուրացման, որպես հանցակազմի որակման համար անհրաժեշտ է, որ յուրացում կատարելու դիտավորություն ունեցող հանցավոր անձնավորությունը, ԱՊՕՐԻՆԻ, ԱՆՀԱՏՈՒՅՑ, ՇԱՀԱԴԻՏԱԿԱՆ կերպով օգտագործելով իրեն վստահված գույքի նկատմամբ ունեցած լիազորությունները, այդ գույքը դուրս բերի սեփականատիրոջ գույքի ընդհանուր ֆոնդից եւ դարձնի իր գույքի մաս: Իսկ կինս հանդիսացել է «Ռոսգոսստրախ Արմենիա» ՓԲԸ-ի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող գործակալ եւ գումարն ընդամենը ԿՈՐՑՐԵԼ է, որպիսի հանգամանքը ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Չէ, եւ կնոջս արարքում բացակայում է որեւէ հանցակազմ: Դատախազ Կարապետյանը հաղորդման ժամանակ խաբեց քրեական իրավունքի նրբություններին չտիրապետող լայն հասարակությանը, թաքցրեց գործի իրական հանգամանքները, որպես ապացույցներ ներկայացրեց իր ստեղծած արհեստական «ապացույցները» եւ վերջում էլ շատ սրտացավ կերպով ապահովագրական կազմակերպություններին խորհուրդ տվեց գործակալներ ընտրելու հարցում լինել զգույշ: Մինչեւ երբ պետք է այդ հանցագործը պղտորի մեր կյանքը: Ես վստահ եմ, որ կա շատ լուրջ պատճառ, որ ՀՀ դատախազության որոշ պաշտոնատարներ ամեն ինչ անում են, որպեսզի նա չստանա օրենքով նախատեսված արժանի պատիժ:

Մեծարգո պարոն նախագահ, խոնարհաբար խնդրում եմ, Ձեր միջամտությամբ պահանջեք համապատասխան մարմիններից այդ հանցագործի նկատմամբ գործուն միջոցներ ձեռնարկել:

Ներսես ԽԱՉԱՏՐՅԱՆ,
Սիսիան, 4 մայիսի 2013թ.

Հարկային տեսչությունները կմիավորվեն

ՀՀ պետեկամուտների կոմիտեն կառավարությանն առաջարկում է միավորել մի քանի հարկային տեսչություններ: Նախագծի համաձայն՝ «Զարենցավանի տարածքային հարկային տեսչությունը վերակազմակերպել միացման ձեւով, այն միացնելով Հրազդանի տարածքային հարկային տեսչությանը, Արթիկի տարածքային հարկային տեսչությունը վերակազմակերպել միացման ձեւով, այն միացնելով Գյումրու տարածքային հարկային տեսչությանը, Սիսիանի տարածքային հարկային տեսչությունը վերակազմակերպել միացման ձեւով, այն միացնելով Գորիսի տարածքային հարկային տեսչությանը, Արարատի տարածքային հարկային տեսչությունը վերակազմակերպել միացման ձեւով, այն միացնելով Արտաշատի տարածքային հարկային տեսչությանը»: Պետեկամուտների կոմիտեում վստահ են. «Նախագծի կարգավորման առարկան հարկային մարմնի կառուցվածքի բարեփոխումներն են, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային (տարածքային) տեսչությունների օպտիմալ թվի սահմանումը, բիզնես միջավայրի բարելավումը, հարկ վճարողների հետ շփումների նվազեցումը եւ հարկային մարմնի գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացումը: Ներկայացվող նախագծով կառավարման համակարգի կառուցվածքի բարեփոխման առումով առաջարկվում է օպտիմալացնել հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքը՝ կրճատելով տարածքային հարկային տեսչություններ: Նախագծի ընդունման արդյունքում կկրճատվեն հարկային տարածքային տեսչություններ (միացման արդյունքում), կօպտիմալացվի հարկային մարմնի կառավարման համակարգը»:

hraparak.am

18 տարին չլրացած անձանց ծխախոտ եւ ալկոհոլային խմիչքներ վաճառելը՝ զանցանք

Ըստ Սյունիքի մարզի դատախազության տարածած հաղորդագրության՝ դատախազական ներգործության միջոցներ ձեռնարկելու արդյունքում Կապան քաղաքի անչափահաս բնակիչներ Ս.Հ.-ին, Մ.Մ.-ին եւ Վ.Հ.-ն ոգելից խմիչք եւ ծխախոտ վաճառելու համար Կապանի քաղաքապետի կողմից վարչական պատասխանատվության են ենթարկվել «ՄՄ» մթերային խանութի անհատ ձեռնարկատեր Հ.Դավթյանը եւ «Մատադոր» սրճարանի աշխատակից Մ.Խաչատրյանը:

Անչափահասները, գտնվելով ոգելից խմիչքի ազդեցության տակ, դրսեւորել են հակաօրինական վարքագիծ եւ կատարել հանցագործություն: Հաշվի առնելով անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների կանխարգելման, օրինախախտումների կատարմանը նպաստող պայմանների վերացման խնդիրների կարեւորությունը, մարզի դատախազությունը պարզաբանում է, որ 18 տարին չլրացած անձանց ծխախոտ եւ ալկոհոլային խմիչքներ վաճառելը համարվում է զանցանք, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածով նախատեսված է վարչական պատասխանատվություն:

■

Ժողովրդի սերը՝ ամենաբարձր գնահատական

Սկիզբը՝ էջ 3

ամեն հիվանդ տարբեր է, անհատականություն, մի յուրովի ճակատագիր է եւ աշխարհ:

– Տիկին Իսախանյան, ասում են՝ վտանգի պահին բժիշկն իրավունք չունի ցույց տալ իր զգացմունքները: Մինչդեռ ես տեսել եմ, թե ինչպես է բժիշկն արտասվելով ստուգում հիվանդի զարկերակը եւ այլեւս մեռնող հիվանդին, որ արդեն չէր էլ լսում, հավատացնում, որ ամեն ինչ լավ կլինի...

– Այո, այդպես էլ է պատահում, երբ հիվանդն արդեն անփրկելի է լինում, եւ բժիշկն ինքը չի կարողանում զսպել իր հուզմունքը: Բայց նա պարտավոր է մինչեւ վերջ հուսադրել հիվանդին, եթե անգամ նա արդեն չի լսում (պետք է մտածել, որ հիվանդն անգամ անգիտակից վիճակում՝միշտ լսում է) եւ անել ամեն ինչ՝ մինչեւ վերջին վայրկյանը: Տեսնու՞մ եք, որ մենք՝ բժիշկներս էլ, սովորական մարդիկ ենք. վտանգի պահին՝ արտասովոր ուժով, բայց երբ կատարվում է անխուսափելին՝ մենք էլ հաճախ հուզվում ենք՝ ամենքս յուրովի: Այդպիսին է բժշկի կյանքը՝ գերբեռնված հուզական տարաբնույթ լարվածությամբ, փորձի՝ խաբուսիկ, եզրահանգման՝ դժվար պահերով, որովհետեւ կյանքն ինքն է այդպիսին. աննշան երեւույթից՝ անպատկերացնելի ողբերգություն եւ մեծ, անլուծելի խնդրից՝ բարեհաջող շրջադարձ: Վտանգավոր պահերը կյանքում էլ, որպես օրենք, հանկարծակի են գալիս: Հաճախ մտածելու ժամանակ չի լինում, եւ ամենամեծ փորձն էլ կարող է չօգնել քեզ: Միակ ելքը բժշկի համար մնում է հոգով արիանալը, իր հնարամտությունը եւ վճռականությունը: Այս ամենով հանդերձ, բժշկի առաքելության կողքին ոչ պակաս կուզեի կարեւորել հիվանդի եւ նրան շրջապատողների դերը, ովքեր պետք է նպաստեն բժշկի գործունեության արդյունավետությանը՝ իրենց հավատով, զսպվածությամբ, հիվանդի համար արտաքին բարեպաստ իրավիճակի ապահովմամբ:

– Ի դեպ, տիկին Իսախանյան, հիվանդի մասին. ասում են, եթե հիվանդն ինքը չի ուզում առողջանալ՝ բժիշկն անզոր է:

– Այո, այդպիսի բան կա, եւ Դուք լրացրիք իմ միտքը: Նույնիսկ բժշկության մեջ մի այսպիսի հետաքրքիր պատմություն-խրատ կա. բժիշկը, հիվանդը եւ նրա հիվանդությունը մնում են երեքով, դեմ առ դեմ: Եթե հիվանդը միանում է իր հիվանդությանը, բժիշկը մնում է մենակ՝ երկուսի դեմ, իսկ եթե բժշկին, ապա՝ երկուսով հաղթում են հիվանդությանը: Հիվանդը պետք է լավատեսորեն տրամադրվի իր հիվանդության նկատմամբ, հավատա բժշկին, ում խոսքը պետք է համոզիչ եւ ազդեցիկ լինի: Առանց այս նախապայմանների բուժումն իմաստ չունի սկսել: Մեր ժողովուրդը դարեր շարունակ բժշկությունը համարել է աստվածային գիտություն, հրաշք, հրաշագործություն, իսկ բժշկին՝ աստվածացրել է, համարել հրաշագործ: Իրոք, բժշկությունը հրաշագործության պես մի բան է, եւ հիվանդը բուժվելուց առաջ պետք է հավատա այդ հրաշքին: Մեր պրակտիկան լի է իրական հրաշքներով, եւ դրանց հեղինակը ոչ այնքան դեղորայքներն են, որքան հիվանդը՝իր հավատով, համբերությամբ, բժիշկը՝ իր խոսքով, դեմքի ուրախ արտահայտությամբ, նաեւ՝ հումորով, հիվանդությունը թեթեւությամբ ընդունելու եւ ճանապարհելու կարողությամբ: Այսպիսի մի խոսք էլ կա. երբ դու ծիծաղում ես, հիվանդությունն իրեն ծաղրված է զգում եւ քեզանից հեռանում է:

– Տիկին Իսախանյան, առաջին եռյակի շարքում ո՞ր հիվանդություններն են, որ այսօր առավել հաճախակի են դիտվում, եւ ո՞ր հիվանդություններն են, որ երիտասարդացել են... Ձեր կարծիքը՝ բժշկի ունեցած այսօրվա հեղինակության մասին: Տուժել է այն. ինչո՞ւ: Հասարակ քաղաքացու համար՝ բժշկության մատչելիության մասին:

– Վերջին տարիների սոցիոլոգիական հաշվումներով՝ առաջին տեղում են սիրտանոթային հիվանդությունները, երկրորդ՝ ուռուցքային, եւ երրորդ՝ բոլոր մյուս հիվանդությունները: Երիտասարդացել են ինչպես հիշյալ հիվանդությունները, այնպես էլ՝ մի շարք այլ հիվանդություններ, որոնց գլխավորում են սիրտանոթային համակարգում ամենատարածված՝ զարկերակային հիպերտենզիան, շաքարային դիաբետը: Ի դեպ, ասեմ, որ թվարկած հիվանդությունները, եթե, իհարկե, ընդգծված ժառանգական չեն, նաեւ ինչ-որ չափով պայմանավորված են տարածաշրջանում 90-ական թվականների պատերազմական իրավիճակով, նյարդային-սթրեսային ապրումներով: Ցավոք, մեր հասարակությունը ենթարկվեց լուրջ հոգեբանական փորձությունների, եւ չծնված պտուղն անգամ արդեն կրում է դրանց ազդեցությունը: Մարդիկ հնարավորինս պետք է իրենց զերծ պահեն տխուր, հոռետեսական մտքերից, ավելորդ նյարդային եւ հուզական բեռնվածությունից: Այստեղ է, որ լավ բժիշկը կարեւորում է ոչ այնքան առատ դեղորայքների նշանակումը, որքան՝ օգտակարը: Ասում են՝ սկսնակ բժիշկը դուրս է գրում քսան դեղամիջոց՝ մեկ հիվանդության դեմ, իսկ փորձառու բժիշկը՝ մեկ դեղամիջոց՝ քսան հիվանդության դեմ: Երբեմն բժիշկը նույնիսկ այդ մեկ դեղամիջոցը դուրս գրելու կարիք չի ունենում. նա իր հիվանդին պարզապես բուժում է որեւէ խորհրդով կամ բարի ներշնչանքով:

Բժշկի ունեցած այսօրվա հեղինակությունը, ինչ խոսք, փոքր-ինչ խաթարվել է, դարձել է երերուն եւ ասես փախչում է հենց բժշկի ոտքերի տակից: Երկրի համակարգային փոփոխությունները, բնականաբար, նաեւ առողջության համակարգին են անդրադարձել: Առաջին հայացքից՝ անվերջ կարելի է մեղավորներ փնտրել՝ եւ կառավարական մարմինների, օրենք սահմանողների, եւ բժշկական համակարգի ասպարեզում: Մինչդեռ, ես կասեմ. բժշկի հեղինակության համար առաջին պատասխանատուն հենց բժիշկն է: Յուրաքանչյուր բժիշկ ինքն է ստեղծում իր հեղինակությունը, եւ այստեղ այնքան էլ կարեւոր չեն ոչ աշխատավարձի չափը, ոչ առողջապահությանը հատկացված պետական միջոցների չափը, ոչ փոփոխված համակարգը, ոչ էլ, առավել եւս, հիվանդի վճարունակությունը: Միանշանակ, եթե բժիշկն ապրում է հիվանդի կյանքով, նրա ցավը եւ մտահոգությունը համարում իրենը, ձգտում անկեղծորեն օգնել նրան, բուժել նրա հիվանդությունը, այդպիսի բժիշկը վայելելու է եւ հեղինակություն, եւ հիվանդի հարգանքն ու սերը: Բժիշկը երբեք իրավունք չունի հիվանդից խնայելու իր հանգիստը, իր սերն ու բարությունը, իր բժշկական իմացությունն ու ջանքերը: Նա պետք է ամեն օր կատարելագործի իր գիտելիքները, տեղյակ լինի հիվանդության կլինիկային, ժամանակակից բուժման մեթոդներին, չլճանա, չբավարարվի բուհական գիտելիքներով, բժշկության ասպարեզում կենդանի շփումներ հաստատի, որովհետեւ այսօր բժշկությունը մեծ տեմպերով զարգանում եւ հիվանդությունների բուժման անընդհատ կատարելագործվող նոր տեխնոլոգիաներ եւ եղանակներ է առաջադրում: Մեծ թռիչքներ կատարվեցին նաեւ կարդիո-վիրաբուժության ասպարեզում:

Բժշկի հեղինակությունը նաեւ նրա խոր տեղեկացվածությունն է ժամանակակից բժշկագիտությունից: Ինչ վերաբերում է բնակչության համար այսօրվա բժշկության մատչելիությանը, բոլորս էլ տեղեկացված ենք, որ բնակչության մեծ տոկոսը վճարունակ չէ: Ինչպես ասում են, հիվանդը շատ հաճախ դիմում է բժշկին այն ժամանակ, երբ դանակը հասնում է ոսկորին: Նման դեպքերում՝ երբեմն շատ ուշ է լինում, իսկ երբեմն էլ տարիներով ձգձգվում-երկարում է բուժման գործընթացը: Մինչդեռ, ո՞վ չգիտե, որ հիվանդության կանխարգելումն ավելի հեշտ է, քան նրա բուժումը: Բժշկության համակարգում էլ դեռ շատ հարցեր հստակեցված չեն, նորանկախ երկիրն ինքն էլ կայացման շրջան է ապրում. դա վերաբերում է եւ ոլորտին հատկացված սահմանափակ բյուջեին, եւ՝ պետական պատվերներին, եւ՝ հաշվառված հիվանդներին տրամադրվելիք անվճար դեղամիջոցներին, ընդհանուր առմամբ՝ առողջապահության կառավարմանը, հօգուտ ազգաբնակչության՝ նոր օրենքների ընդունման անհրաժեշտությանը:

– Տիկին Իսախանյան, զրույցի ընթացքում Դուք նշեցիք առողջապահության մշակույթի, կուլտուրայի մասին: Ինչպիսի՞ն է այն մեզ մոտ, եւ ինչպե՞ս կարող է սովորական քաղաքացին ընկալել այդ հասկացությունը:

– Առողջապահության մշակույթը շատ ծավալուն թեմա է, հնարավոր չէ մի քանի բառով խոսել նրա կարեւորության մասին: Ընդամենը կասեմ, որ առողջություն պահպանելը նաեւ մշակույթ է, կուլտուրա, որը վաղուց ձեւավորված է զարգացած պետություններում: Մեր բնակչության շրջանում, ցավոք, այն ամրագրված երեւույթ չէ, որն էլ իր հերթին շատ եւ շատ խնդիրներ է առաջացնում եւ՝ բուժաձնակազմի աշխատանքում, եւ՝ բնակչության կյանքի ու առողջության պահպանման ասպարեզում: Յուրաքանչյուր մարդ, լինի հիվանդ, թե՝ ոչ, պետք է իր մեջ ներքին մշակույթ ձեւավորի՝ իր առողջության պահպանման, ժամանակին հետազոտման, հնարավոր այս կամ հիվանդության հայտնաբերման, կանխարգելման եւ բուժման ուղղությամբ: Բնակչության մեջ այդ մշակույթը բացակայում է, եւ շատ հաճախ մարդիկ սիրում են պատճառաբանել իրենց անվճարունակությունը: Մինչդեռ, խոստովանենք, դա այդպես չէ. մեր բոլոր պոլիկլինիկաներն անվճար են, իսկ ստացիոնարում ամեն բուժում չէ, որ անմատչելի է հասարակ քաղաքացու գրպանի համար: Շատ հաճախ դրանք կոպեկներ են այն գների համեմատ, որը հետո նրանք ստիպված են լինում վճարել արդեն բարդացած հիվանդությունների հետազոտման, բուժման կամ վիրահատությունների ժամանակ: Կուզեի առողջության պահպանման մշակույթն ամրապնդվեր մեր հասարակության մեջ, մարդիկ ավելի քաղաքակիրթ, սրտացավ վերաբերվեին իրենց իսկ առողջությանը, օրգանիզմին, վարեին առողջ ապրելակերպ:

– Տիկին Իսախանյան, ի՞նչ է Ձեզ համար Հիպոկրատի երդումը, եւ ո՞րն է հիվանդների կամ երբեւէ Ձեզ դիմած մարդկանց կողմից Ձեր վայելած անկեղծ սիրո ու հարգանքի գաղտնիքը: Ի՞նչ կմաղթեիք մեր ժողովրդին, մեր երկրին:

– Հիպոկրատի երդումն ինձ համար կենսակերպ է, բժշկական օրենքներին եւ նորմերին՝ հավատարմության ուխտ: Ով ոտք է դնում բժշկի ուղին, նրա մտավոր ու բարոյական սկզբունքները պետք է նոր որակ ստանան, քննություն բռնեն բարձր բարոյա-էթիկական դաշտում: Չէ՞ որ կարեւոր է ոչ միայն հիվանդության բուժումը, կարեւոր են ոչ պակաս հիվանդի հոգեկան աշխարհի թափանցելու կարողությունը, նրա անհատականությունը, առանձնահատկությունները ճանաչելն ու հարգելը: Եվ քանի որ բժիշկը գործ ունի մարդու կյանքի եւ առողջության հետ, ուստի, գիտելիքներից բացի, նա պետք է օժտված լինի բազմաթիվ բարոյահոգեբանական հատկանիշներով, ինչպիսիք են սրտացավությունն ու անձնվիրումը: Իսկ իմ հիվանդները, հավանաբար, ավելի լավ գիտեն, թե ինչու են սիրում իրենց բժշկին: Ես իրականում ընդամենն օգնում եմ, որ հիվանդներս առողջանան, որ կյանքին նայեն ավելի պայծառ ու հավատով: Դա յուրաքանչյուր բժշկի կոչումն ու պարտքն է:

Մեր ժողովրդին էլ մաղթում եմ, բնականաբար, առողջություն, ներքին կուլտուրա եւ հոգատարություն՝ իրենց առողջությունը պահպանելու, թույլ չտալու, որ հիվանդությունները բարդանան:

Մեր երկրին, պետությանը մաղթում եմ բարգավաճ տնտեսություն, հզորացում, որն էլ երաշխիք կհանդիսանա մեր ժողովրդի արժանապատիվ գոյության, եւ մարդիկ ավելի բարձր պատասխանատվությամբ ու սիրով կվերաբերվեն իրենց կյանքին ու առողջությանը:

Հարցազրույցը՝
ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ

Ազատությունը չվերածել սանձարձակության

ՄԱՅԻՍԻ 3-Ը ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

Սկիզբը՝ էջ 1

կամ թերթում եմ կարդացել» արտահայտությունը տարածվում է բոլորի վրա, ու բացասական վերաբերմունքն ընկնում է ՁԼՄ բոլոր ներկայացուցիչների վրա:

Այսօր Facebook-ը դարձել է մեր կյանքի ու աշխատանքի անբաժան մասը: Ինչպես լրագրողներն են գրառումներ կատարում իրենց ֆեյսբուքյան էջերում, այնպես էլ քաղաքական գործիչները: Ի դեպ, ֆեյսբուքում առավել ակտիվ են այն քաղաքական գործիչները, ովքեր հասանելի են նաեւ իրական կյանքում ու յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ կարող ես նրանց զանգել եւ կարծիք հարցնել: Արդյոք իմաստ կա՞ այս կամ այն պատգամավորի կամ քաղաքական ակտիվիստի ստատուսը copy paste անել եւ տեղադրել կայքում՝ դա դարձնելով հոդված ու ցածրացնելով հոդված հասկացությունը:

Խոսելով Copy paste-ի մասին՝ պետք է փաստել, որ արտահայտությունն արդեն 2 տարի այլ նշանակություն է ստացել եւ համակարգչային գործողությունից վերածվել նյութագողության, բանագողության: Մեր ոլորտում այս խնդիրը դեռեւս որեւէ կարգավորիչ մեխանիզմ չունի: Մեր թերթի պարագայում էլ շատ են եղել դեպքերը, երբ զանգել ենք այս կամ այն խմբագրություն եւ տեղեկացրել, որ հոդվածը գողացված է, պահանջել ենք կամ կայքից ջնջել, կամ հղում ավելացնել: Բազմաթիվ անգամ «Վայ, մենք չենք իմացել, հիմա կուղղենք» պատասխանն այդպես էլ շարունակություն չի ստացել, ու նույն լրատվամիջոցը մի քանի օր անց կրկին նույն ձեռագրով նույն Copy paste-ն է կատարել:

Ավագ գործընկերներս հաճախ ասում են, որ պետք է հաճախ դիտել օտարերկրյա նախագահների, քաղաքական գործիչների ասուլիսները: Նախ գործում է dress code պարտադիր հասկացությունը, բացի դրանից՝ հարց տալու, ներկայանալու եւ պատասխանի սպասելու մշակույթ: Մեր ոլորտում dress code հասկացություն գոյություն չունի: Ամենաբազմազան՝ երեկոյան, ծովափնյա ու լայն բացվածքներով հագուստով լրագրողների կարելի է հանդիպել ամենատարբեր գերատեսչություններում՝ նախագահական նստավայրից մինչեւ պաշտպանության նախարարություն եւ քաղաքապետարան:

Մեր ոլորտում ազատություն ասվածը մի տեսակ այլ ենթատեքստ է ստացել, դարձել է սանձարձակություն: Լրագրողի զենքը հարցերն են՝ սուր եւ դիպուկ: Սուր եւ դիպուկ դեռեւս չի նշանակում վիրավորել, սարկազմով ու հեգնանքով ծոր տալ հարցը կամ մազերի հետ խաղալով «քնքշորեն» վիրավորել դիմացը կանգնած քաղաքական գործչին: «Եթե քո հարցին չեն պատասխանում, դա նույնպես պատասխան է»: Սա լրագրողական ամենահայտնի ասացվածքներից մեկն է, մինչդեռ մենք հաճախ ենք այն անտեսում: «Իսկ դուք չե՞ք կարծում այսպես, իսկ դուք չե՞ք կարծում այնպես, իսկ ինչո՞ւ չեք ասում, ինչո՞ւ անկեղծ չեք, լավ, էլի, պարոն էսինչյան, հիմա դուք մեր հարցին չե՞ք պատասխանելու, ո՞ւր եք գնում, եկեք իմ հարցերին առանձին պատասխանեք» ու նմանատիպ հարցերի մի ամբողջ տարափ է թափվում հատկապես այն քաղաքական գործիչների գլխին, ովքեր, մեղմ ասած, նախ չգիտեն, թե ինչո՞ւ են ԱԺ-ում եւ չգիտեն՝ ինչպե՞ս խոսել եւ ինչպե՞ս պատասխանել լրագրողների հարցերին: Լրագրողներից ազատվելու համար քաղաքական գործիչները, օլիգարխ բիզնեսմենները վիրավորում են, հրում, անպատվում լրագրողներին, ու պատրաստ է սկանդալը, որը մի քանի օր շարունակ քննարկվում է սոցցանցերում, հետո մարում:

Իրականում լրագրողական ազատությունը մտքի ազատությունն է, հոդված գրելու, հարց տալու եւ պարզաբանումներ պահանջելու, այն չի ենթադրում հագուկապի, բառապաշարի ազատություն, վիրավորանք եւ սադրանք: Այս պարագայում ազատությունը վերածվում է սանձարձակության, եւ պատասխանն էլ լինում է համարժեք: Իրականում խնդիրը չափազանց լուրջ է, որովհետեւ նման պահվածքով լրագրությունը եւ լրագրողներ հասկացությունը նսեմացվում է ու կորցնում իր արժեքը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
azg.am, 03.05.2013

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ● 15 ՄԱՅԻՍԻ 2013Թ ● № 12 (285)

9 ՄԱՅԻՍԻ 2013Թ.

ՏՈՆԱԿԱՆ

Հաղթանակի եւ խաղաղության փոնը հանդիսավորությամբ եւ փոնական միջոցառումներով նշանավորվեցին Մեղրիում, Ագարակում, Գորիսում, Սիսիանում, Կապանում, Քաջարանում եւ մարզի գրեթե բոլոր գյուղական համայնքներում: Կապանում եւ Քաջարանում տեղի ունեցած փոնական միջոցառումների մասին՝ ստորեւ:

9 մայիսի 2013թ., ք.Քաջարան

Կապանում

Շուշիի ազատագրման 21-ամյակի եւ Մեծ հայրենականում տարած հաղթանակի 68-րդ տարեդարձին նվիրված միջոցառումները Կապանում մեկնարկեցին մայիսի 8-ին: Մշակույթի կենտրոնի մարտական փառքի սրահում հանդիպում էր կազմակերպվել երկրորդ աշխարհամարտի մասնակիցների հետ՝ մասնակցությամբ Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանի, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի, Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանի: Հնչեցին օրվա խորհրդին պատշաճ շնորհավորանքի խոսքեր, դպրոցականները հանդես եկան գրական-երաժշտական համադրությամբ: Արժանին մատուցվեց 1941-1945թթ. պատերազմի մասնակիցներին, բայց նաեւ ափսոսանքով նշվեց, որ վետերանների շարքերը գնալով նոսրանում են: Պատերազմի վետերաններին հանձնվեցին դրամական պարգեւներ:

Մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում նույն օրը կայացավ հանդիսավոր միջոցառում, որին վետերանների հետ մասնակցում էին Արցախյան գոյամարտի մասնակիցներ: Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը հանդես եկավ շնորհավորական ուղերձով, ապա շնորհակալագրեր հանձնեց մի խումբ երկրապահների, զինծառայողների: Հանդիսավոր նիստն ավարտվեց տոնական համերգով:

Մայիսի 9-ի առավոտից Կապանի Գարեգին Նժդեհի հրապարակում փողային նվագախումբը տոնական մեղեդիներ էր հնչեցնում: Հրապարակում հավաքվել էին Մեծ հայրենականի մասնակիցներ, մարզային եւ քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, տարբեր զբաղմունքի եւ տարիքի մարդիկ, դպրոցականներ: Տոնական շքերթին մասնակցում էին Կապանում տեղակայված զորամասի մարտիկները, ովքեր հրապարակով անցան հանդիսավոր քայլերգով: Հետախուզական դասակի մարտիկները ներկայացրին մարտարվեստի հնարքներ, հակառակորդի դիվերսիոն խմբի վնասազերծման դրվագներ: Այնուհետեւ հանդիսության մասնակիցները շարժվեցին դեպի Բաղաբուրջի հուշահամալիր, որտեղ հարգանքի տուրք մատուցվեց երկրորդ աշխարհամարտում ընկած կապանցի զինվորների հիշատակին: Ծաղիկներ դրվեցին զինվորի հուշաքարին եւ Արցախյան գոյամարտում ընկածների շիրիմներին:

Օրվա երկրորդ կեսին հանդիսությունը տեղափոխվեց Կապանի մանկական զբոսայգի, որտեղ ծաղկեպսակներ դրվեցին Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանի հուշարձանի պատվանդանին: Օրն ավելի տոնական դարձրին Կապանի մշակույթի կենտրոնի ինքնագործ խմբերի ելույթները: Իսկ երեկոյան մարզկենտրոնի երկինքը լուսավորվեց տոնական հրավառության գույներով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Քաջարանում

Մայիսի 9-ին, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 68-րդ տարեդարձի կապակցությամբ, Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը, Կապանի զինկոմի տեղակալ, մայոր Գարիկ Ներսիսյանը, Ագարակի N զորամասի զինվորները, Հայրենական մեծ պատերազմի վետերանները, Արցախյան ազատամարտում զոհված ազատամարտիկների ընտանիքի անդամները եւ տոնակատարության մասնակիցներն այցելեցին Քաջարանի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելով զոհվածների հիշատակին: Այնուհետեւ տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում, որի ընթացքում ելույթ ունեցան Քաջարանի թեյքվանդոյի խմբակի եւ N2 դպրոցի սաները: Քաջարանի քաղաքապետը շնորհակալություն հայտնեց նրանց, ովքեր իրենց կյանքը զոհաբերեցին հանուն հայրենիքի եւ դաստիարակեցին Արցախի ազատագրումն իրականացնող սերունդ: Զինկոմի տեղակալ, մայոր Գարիկ Ներսիսյանն առողջություն եւ երկար տարիների կյանք մաղթեց վետերաններին, խաղաղություն՝ մեր երկրին՝ նշելով, որ ուժը միասնության մեջ է: «Մարտական գործողությունների մասնակից» կրծքանշանով պարգեւատրվեց ութսուն զինծառայող: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն այս տարի եւս դրամական պարգեւներ տվեց վետերաններին, զոհված ազատամարտիկների ընտանիքի անդամներին եւ առաջին կարգի հաշմանդամներին: Միջոցառումն ավարտվեց հրազենային կրակահերթով, որից հետո ներկաներն ուղեւորվեցին գերեզմանոց՝ ծաղիկներ դնելու Արցախյան ազատամարտում զոհված երեսունինը ազատամարտիկների շիրիմներին: Երեկոյան տեղի ունեցավ հրավառություն:

ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆ

Խաղեր պարսիկ խաշնարածներին Սյունիքի արոտավայրերը տրամադրելու հարցի շուրջ

ՉԴԱԴԱՐՈՂ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը մայիսի 6-ին լրագրողների հետ հանդիպմանն անդրադարձել է Սյունիքի արոտավայրերն իրանական կողմին վարձակալությամբ տալու խնդրին: Նա հայտարարել է, որ այս պահին արոտավայրերն օտարերկրացի քաղաքացիներին վարձակալությամբ հանձնելու որեւէ հարց չի քննարկվում: Ըստ Արմեն Գեւորգյանի՝ **«Չնայած այն բանին, որ կնքված համաձայնագրերի պատճենը տեղ է գտել համացանցում, որեւէ իրավական հետեւանք կամ պարտավորություն առաջացնող փաստաթուղթ կամ պայմանավորվածություն ձեռք չի բերվել եւ չկա: Ուզում եմ եւս մեկ անգամ բոլորին տեղեկացնել, որ ոչխարների ներկրման նմանատիպ որեւէ զարգացում չկա: Այդ բոլոր տեղեկություններն իրականությանը չեն համապատասխանում: Այսօրվա ՀՀ կառավարության հիմնական գերակայությունն այն է, որ մեր տեղական գյուղացիական տնտեսություններում առկա ոչխարները կենդանի կամ մսամթերքի ձեւով արտահանվեն այլ երկրներ, մասնավորապես արաբական երկրներ, որպեսզի գյուղացիները կարողանան իրացնել իրենց ապրանքը»:** Արմեն Գեւորգյանի հայտարարությունը, սակայն, միանշանակ չի ընդունվել, քանզի ՀՀ փոխվարչապետը չի անդրադարձել առնվազն մի քանի առանցքային հարցի՝ ա) ինչպե՞ս են ծնվել հայտնի համաձայնագրերը, բ) ինչո՞ւ է Հանրային խորհուրդը քննարկել այդ հարցը (եթե ամեն ինչ սուտ է), գ) ինչո՞ւ է ՀՀ եւ ԻԻՀ միջկառավարական համատեղ հանձնաժողովն իր 11-րդ նիստում այդ մասին փոխըմբռնման հուշագիր ստորագրել, դ) ինչո՞ւ պարսկական «Farsnews.am» լրատվական գործակալության հայտարարությունը չենք հերքում կամ պարսկական կողմին չենք զգուշացնում՝ ձեռնպահ մնալու ստահոդ տեղեկատվություն տարածելուց:

Փաստաթուղթ, որը նոր լույս է սփռում Սյունիքի արոտավայրերը վարձակալությամբ իրանցիներին հանձնելու խորհրդավոր պատմության վրա

Վերջերս մամուլում աղմուկ բարձրացավ ՀՀ Սյունիքի մարզի եւ Իրանի Իսլամական Հանրապետության Արեւելյան Ատրպատական նահանգի միջեւ կնքված «համաձայնագրի» առնչությամբ, ըստ որի՝ Սյունիքի մարզի արոտավայրերի մի մասը վարձակալությամբ հանձնվելու է իրանցի հովիվներին:

Բարձրացված աղմուկը ստիպեց պատասխանատու մարմիններին հայտարարել, որ դա որեւէ իրավական ուժ չունի, այնուհանդերձ մի շարք հարցեր մնացին առկախ: Վերջերս էլ մամուլում հայտնվեց ԻԻՀ Արեւելյան Ատրպատական նահանգի անասնապահության հարցերի վարչության պետ Մոհամմադ Հասան Ալիհաշեմի՝ «ՖԱՐՍ» լրատվական գործակալությանը տված հարցազրույցը, որում նա ասել էր, թե հունիս ամսին 6 ամիս ժամկետով 10.000 գլուխ անասուն պետք է տեղափոխվի Հայաստանի Սյունիքի մարզ: Հայկական կողմը դա եւս հերքեց:

Այժմ «Անկախի» տրամադրության տակ է մի փաստաթուղթ, որը վկայում է, որ հայկական կողմը՝ կառավարական մակարդակով, հավանություն է տվել այդ գործընթացին: Ներկայացնում ենք փաստաթուղթն ամբողջությամբ, իսկ դրա վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ կհրապարակենք ավելի ուշ:

Քաղվածք ՀՀ եւ ԻԻՀ միջկառավարական համատեղ հանձնաժողովի 11-րդ նիստի փոխըմբռնման հուշագրից

1.3. Համագործակցություն առեւտրաարդյունաբերական պալատների միջեւ:

1.3.4. Երկու երկրների Պալատները համաձայնեցին քաջալերել կողմերի մասնավոր հատվածի գործարարներին՝ համատեղ ծրագրեր իրականացնելու հետեւյալ բնագավառներում.

- սնունդ եւ գյուղատնտեսական մթերքների արտահանում ու մշակում:

1.3.7. Երկու երկրների առեւտրի պալատները համաձայնեցին խրախուսել ընկերություններին Իրան արտահանելու նպատակով Հայաստանում կառուցել ոչխարաբուծության, ինչպես նաեւ ջրային կենդանիների բազմացման համալիր:

1.4. Գյուղատնտեսություն

1.4.7. Իրանական կողմը պատրաստակամություն հայտնեց համատեղ ներդրումներով Հայաստանի Հանրապետությունում հիմնել մանր եղջերավոր կենդանիների բուծման տնտեսություն, ինչպես նաեւ սպանդանոցներ, իսկ հայկական կողմը համաձայնեց աջակցություն ցուցաբերել այդ աշխատանքներին:

1.4.8. Կողմերը համաձայնեցին աջակցել մասնավոր հատվածի կողմից՝ «Arman Agro industrial complex» ընկերության ստեղծմանը, որի գործունեությունը կիրականացվի ագրոարդյունաբերության ոլորտում իսլամական սպանդանոցի, արոտավայրերի բարելավման եւ օգտագործման, այգեգործության եւ այլ գործունեության զարգացման ուղղությամբ:

Հանրային խորհուրդը քննարկեց Սյունիքի մարզի արոտավայրերի մի մասը վարձակալությամբ իրանցի հովիվներին հանձնելու հարցը

Ապրիլի 25-ին Հանրային խորհրդի լիագումար նիստում քննարկվեց Հայաստանի արոտավայրերի օգտագործման հարցը: ՀԽ անդամ, ՀԽ գյուղատնտեսության եւ բնապահպանական հարցերի հանձնաժողովի նախագահ Յուրի Ջավադյանը մասնավորապես անդրադարձավ ՀՀ Սյունիքի մարզի եւ Իրանի Իսլամական Հանրապետության Արեւելյան Ատրպատական նահանգի միջեւ կնքված «համաձայնագրին»՝ Սյունիքի մարզի արոտավայրերի մի մասը վարձակալությամբ իրանցի հովիվներին հանձնելու վերաբերյալ: Նա նշեց, որ այդ «համաձայնագիրը» չունի որեւէ իրավական ուժ, քանի դեռ ՀՀ հողային օրենսգրքի պահանջների համաձայն պայմանագրեր չեն կնքվել եւ գրանցում չեն ստացել: Հանրային խորհուրդն անընդունելի համարեց նմանատիպ ծրագրերի իրականացումը՝ անկախ իրավական ձեւակերպումներից, քանի որ դրանք հակասում են Հայաստանի տնտեսական եւ անվտանգության շահերին: Ներկաները բարձրացրին օրենսդրության թերի լինելու հարցը: ՀԽ նախագահ Վազգեն Մանուկյանը հարց բարձրացրեց. եթե լրատվամիջոցների աղմուկը չլիներ, այդ հովիվները կգայի՞ն Հայաստան: Ներկաները ենթադրեցին, որ այո: Առաջարկվեց ոչ նպատակահարմար գտնել հանրապետությունում հեռագնա արոտավայրերի օգտագործումն օտարերկրացի քաղաքացիներին վարձակալությամբ հանձնելը, սակայն ՀԽ անդամ Արմեն Տեր-Տաճատյանը նկատեց, որ այդ դեպքում խնդիր կառաջանա հնարավոր օտարեկրացի ներդրումներից զրկվելու տեսանկյունից: Վազգեն Մանուկյանն առաջարկեց այնպիսի որոշում ընդունել, որը մի կողմից խոչընդոտ չլինի օտարերկրացի ներդրողների համար, մյուս կողմից՝ չվտանգի ազգային անվտանգությունն ու տնտեսական շահերը: Առաջարկ եղավ նաեւ վերոնշյալ «համաձայնագրի» վերաբերյալ դատապարտող որոշում կայացնել՝ բարձացնելով նաեւ նման դեպքերում պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու հարցը: Յուրի Ջավադյանը ներկայացրեց նաեւ ՀԽ ուսումնասիրությունների արդյունքները՝ փաստելով, որ համաձայն ՀՀ հողային ֆոնդի առկայության եւ բաշխման վերաբերյալ 2012թ. հաշվետվության՝ արոտավայրերի մակերեսը կազմում է 1056.3 հազ. հա, որից հեռագնա՝ 687.3 հազ. հա, մերձգյուղային՝ 369.0 հազ. հա: **«Այդ արոտավայրերի տարածքը ՀԽՍՀ ժամանակաշրջանում թույլ էր տալիս պահել 2.1 մլն ոչխար՝ ներկայիս 670.0 հազարի փոխարեն, ինչը վկայում է արոտավայրերի ոչ արդյունավետ օգտագործման եւ զարգացման մասին»,** – ասաց Յուրի Ջավադյանը: Հանրային խորհուրդը հարցի վերաբերյալ որոշում կկայացնի ՀԽ առաջիկա փոքր խորհրդի նիստի ընթացքում: ԶԼՄ-ները կարող են մեջբերել Aravot.am-ի նյութերը՝ մեջբերվող նյութի հիպերհղումով: Հիպերհղումը պետք է տեղադրվի տեքստի առաջին պարբերությունում:

ankakh.am

Հյուրընկալություն Երեւանի պետական համալսարանում

Ապրիլի 16-ին եւ 17-ին Սյունիք գյուղի միջնակարգ դպրոցի մի խումբ աշակերտներ դպրոցի տնօրեն Արթուր Մնացականյանի գլխավորությամբ եղան մայրաքաղաքում, այցելեցին մայր բուհ՝ Երեւանի պետական համալսարան, Խոր վիրապ, հետդարձի ճանապարհին այցելեցին Զանգակատուն գյուղում գտնվող Պարույր Սեւակի տուն-թանգարան, ծանոթացան նրա ցուցադրանքին, ծաղիկներ դրեցին մեծ պոետի շիրմաքարին: Մի ամբողջ շաբաթ դպրոցում բոլորը խոսում էին աշակերտների շրջագայությունից, քանզի վառ էին տպավորությունները եւ քաղցր՝ հիշողությունները: Սկորեւ ներկայացնում ենք կրթօջախի երկու սանի տպավորությունները եւ աշակերտական խորհրդի շնորհակալական խոսքը:

Գոռ Սրբեփանյան

11-րդ դասարանի աշակերտ

Մի քանի օր շարունակ դպրոցում լուրեր էին պտտվում, որ մի խումբ դպրոցականներ ուղեւորության են մեկնելու Երեւան՝ պետական համալսարան: Որպեսզի օբյեկտիվ ընտրություն կատարվեր, տնօրինությունը հայտարարեց մրցույթ՝ հայոց պատմություն առարկայից: Բարձր միավորներ հավաքած սովորողները մայրաքաղաքում երկօրյա շրջագայության իրավունք ստացան: Ասեմ, որ շրջագայության ծախսերի մեծ մասը հոգաց Սյունիքի համայնքապետ Սամվել Սարգսյանը:

Գյուղը լցվել էր աշխույժով. հավաքվել էին ծնող ու բարեկամ՝ երեխաներին բարի ճանապարհ մաղթելու: Դպրոցից մինչեւ Երեւան ճանապարհը հաղթահարեցինք բարձր տրամադրությամբ, ոգեւորությամբ: Համալսարանի մուտքի մոտ մեզ դիմավորեց մայր բուհի հայագիտական հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Միեր Հովհաննիսյանը: Նա տիկին Սաթենիկի՝ ԵՊՀ-ի եւ ՀՀ ուսումնական հաստատությունների կապերի վարչության աշխատակցի հետ, մեզ հրավիրեց համալսարանի պատմության թանգարան, որտեղ մանրամասն ներկայացրին մայր բուհի անցած ուղին: Մենք նրա պատմածները լսում էինք մեծ ուշադրությամբ եւ զարմանում, որ հայ ժողովուրդը թե՛ պատերազմական իրավիճակում, թե՛ զրկանքների պայմաններում եւ թե՛ երկրի համար ճակատագրական պահին չի մոռանում իր մշակույթը: Մեկ անգամ եւս համոզվեցի, որ մեզ համար կրթությունը պատմության բոլոր խաչուղիներում էլ եղել է առաջնային: Միեր Հովհաննիսյանը, որ, ի դեպ, մեր հայրենակիցն է, մեր դպրոցին նվիրեց արժեքավոր գրքեր, որոնք տեղ գտան դպրոցի փոքրիկ գրադարանում:

Աննկարագրելի են այն զգացումները, որ ունեցա համալսարանի շեմին եւ կարծես երանությամբ լցվեցի ինձ շրջապատող ուսանողների նկատմամբ, իսկ նրանց միայն մեկ հարց էր հետաքրքրում, թե մենք որտեղից ենք:

Ինձ վրա մեծ տպավորություն թողեցին համալսարանի մաքուր միջանցքները, նորոգված լսարանները, գրքերով ծանրաբեռնված գրադարանները: Եվ իմ մեջ էլ ծնվեց մի նոր ցանկություն…

Անի Մնացականյան

8-րդ դասարանի աշակերտուհի

Շրջագայության երկրորդ օրը եղանք մայր բուհի առաջին մասնաշենքում: Տիկին Սաթենիկի ուղեկցությամբ բարձրացանք երրորդ հարկ, որտեղ մեզ հյուրընկալեց բանասիրական ֆակուլտետի հայ գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը: Եվ քանի որ նա հայոց լեզվի շտեմարանի համահեղինակ է, ուստի հարցերի տարափը սկսվեց շտեմարանի շուրջ: Գրականագետն ուշադիր լսում էր մեր հարցերը եւ մանրակրկիտ բացատրում կամ պարզաբանում: Մենք մեզ թեթեւացած զգացինք, քանի որ այն, ինչ մեզ մտահոգում էր, մտահոգում էր նաեւ հեղինակին: Եվ քանի որ վերադարձի ճանապարհին պետք է այցելեինք Պարույր Սեւակի տուն-թանգարան, տիկին Սաթենիկի հորդորով պարոն Մուրադյանը սկսեց պատմել մեծ բանաստեղծի մասին: Պարզվեց, որ իրական կյանքում նա մտերիմ է եղել Սեւակի հետ: Եվ այն, ինչ լսեցինք մեծ բանաստեղծի մասին, ոչ մի գրքի մեջ չէինք հանդիպել: Այդ է պատճառը, որ բոլորս շունչներս պահած լսում էինք: Ինչքա՜ն լավ էր պատմում, ինչքա՜ն գեղեցիկ էր խոսքը: Երանի թե ժամանակն անսպառ լիներ:

Հաջորդ հանդիպումը պատմության ֆակուլտետի դեկան էդիկ Մինասյանի հետ էր: Նա էլ մեծ սիրով ներկայացրեց ֆակուլտետի պատմությունը, նրա ազատամարտիկ ուսանողներին, ովքեր իրենց կյանքը դրեցին հայրենիքի փրկության զոհասեղանին, որ խաղաղ բացվեն արշալույսները: Ի դեպ, էդիկ Մինասյանը մեր պատմության դասագրքի հեղինակն է:

Իմ ծնողները մայր բուհի շրջանավարտներ են եւ այն, ինչ պատմել էին իրենց ուսանողական կյանքից, շատ քիչ էր իմ տեսածից եւ զգացածից: Այս շրջագայությունը կնպաստի, որ ես էլ քայլեմ ծնողներիս ճանապարհով:

Դպրոցի աշակերտական խորհուրդն իր շնորհակալությունն է հայտնել կրթօջախի տնօրինությանը՝ դաստիարակչական եւ ճանաչողական ծրագրի իրականացման համար, Սյունիքի համայնքի ղեկավար Սամվել Սարգսյանին՝ շրջագայությանն աջակցելու համար: Վերջինս խոստացավ, որ նման շրջագայությունները շարունակական են լինելու:

■

Միաժամանակյա խաղի սեանս հանրաճանաչ գրոսմայստերի մասնակցությամբ

ՇԱԽՄԱՏ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության մարզահամալիրում ապրիլի 26-ից մայիսի 1-ը շվեյցարական մրցակարգով տեղի ունեցավ շախմատի Սյունիքի մարզի առաջնությունը, որին մասնակցում էր 34 շախմատիստ մարզի բոլոր քաղաքներից: Ինը հնարավորից հավաքելով յոթ միավոր՝ առաջնության հաղթող դարձավ Արտյոմ Մանուկյանը (Ագարակ), երկրորդ հորիզոնականում Մերուժան Նազարեթյանն էր (Կապան), երրորդում՝ Վարդան Քարամյանը (Գորիս): Այս անգամ փորձառու շախմատիստներ Վարդան Մովսիսյանը (Սիսիան) եւ Արմեն Խաչատրյանը (Քաջարան) բավարարվեցին համապատասխանաբար չորրորդ եւ հինգերորդ տեղերով: Այս շախմատիստներն արժանացան դրամական պարգեւների, իսկ առաջին երեք տեղեր գրավածները նաեւ պատվոգրերի, որոնք տեղերին հանձնեց հանրաճանաչ գրոսմայստեր Ռաֆայել Վահանյանը:

Նշված շախմատիստները, ինչպես նաեւ Արմենակ Եղիազարյանը եւ Դավիթ Քաթանյանը կմասնակցեն մայիսի 15-24-ը Ջերմուկում կայանալիք շախմատի տարածաշրջանային առաջնությանը:

Ռաֆայել Վահանյանը, օգտվելով Սյունիքում գտնվելու պատեհ առիթից, 24 խաղատախտակի վրա միաժամանակյա խաղի սեանս անցկացրեց Քաջարանում, Ագարակում եւ Կապանում: Կապանում կայացած միաժամանակյա խաղի սեանսում 3 հոգի՝ մանկավարժ Յուրի Հակոբյանը, N6 դպրոցի շախմատի ուսուցիչ Վռամ Թադեւոսյանը, դպրոցական Վիգեն Սահակյանը կարողացան հաղթանակ կորզել գրոսմայստերից, երեք պարտիա ավարտվեց ոչ ոքի, մյուսներում մասնակիցները պարտվեցին: Կապանում մինչեւ մասնակիցների՝ խաղատախտակների շուրջ նստելը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը հանդիպեց գրոսմայստերին եւ նրան Կապանը խորհրդանշող հուշանվեր հանձնեց, ինչպես նաեւ համատեղ քննարկվեցին Կապանում շախմատի զարգացման խնդիրները: Իսկ Ագարակ քաղաքում մինչեւ միաժամանակյա խաղի սեանսի սկսվելը Վահանյանը եղավ իր նախնիների ծննդավայրում՝ Կարճեւան գյուղում, Կարճեւանի դպրոցում, որի թանգարանի լուսանկարի մի մասը պատմում է Տեր-Վահանյան տոհմի մասին:

Ռաֆայել Վահանյանն աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանից հետո երկար ժամանակ հայ շախմատի առաջատարն է եղել, տպավորիչ հաղթանակներ է տոնել միջազգային խոշոր մրցաշարերում՝ միշտ հանդես գալով Հայաստանի դրոշի ներքո: Տարիներ ի վեր բնակվում էր Գերմանիայի Քյոլն քաղաքում, թեեւ միշտ կապված էր հայրենիքի հետ: Իսկ վերջին երեք տարում հիմնականում Հայաստանում է լինում: Իր ասելով՝ բացի Ռոբերտ Ֆիշերից, բոլոր հանրահայտ շախմատիստների հետ խաղացել է: Բարձր կարծիք ունի Հայաստանի ներկայիս շախմատային դպրոցի մասին, բայց նաեւ հավելում է, որ իր ժամանակ շախմատիստների համար նման պայմաններ չէին ստեղծում, մանավանդ մարզումային, հանրապետության շախմատային ակադեմիա չկար (նկատի ունի շախմատի ընդհանուր զարգացման նախապայմանների ստեղծումը): Հանրակրթական դպրոցներում շախմատի առարկայի ներդրումով այնքան էլ հիացած չէ, կարծում է, որ չի կարելի պարտադրել բոլորին շախմատ խաղալ, եւ այն համոզմունքն ունի, որ շախմատ պարապող 25-30 երեխայից հետագայում մեկը կամ երկուսը կարող է կարգին շախմատիստ դառնալ: Ասում է, որ շնորհալի երեխաների հանդիպեց Քաջարանում եւ Ագարակում, որոնք բարձր կարգ ունեցող մարզիչների մոտ պարապելով՝ հաջողություններ կակնկալեն: Նրա փոխանցմամբ՝ շախմատային ունակությունները կարելի է զարգացնել համակարգչի միջոցով, վերջինիս շնորհիվ շախմատային տեսությունը բավականին առաջընթաց է ունեցել, մանավանդ սկզբնախաղային փուլը, բայց նաեւ տուժում է խաղի ստեղծագործական կողմը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ● 15 ՄԱՅԻՍԻ 2013Թ ● № 12 (285)

Նամակ զորամասից

Ղարաբաղյան շարժման սկզբնավորման ու գոյամարտի ժամանակաշրջանի սերունդը բազում դժվարություններ է հաղթահարել, շատերը ենթագիտակցորեն դեռ բարուրի մեջ են զգացել պատերազմի պատճառած փառապանքները:

Այդ ապրումները, անշուշտ, էական դեր են ունեցել այն որոշման մեջ, որ Բռնակոթի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունեց Գեւորգ Վահրամի Ջավադյանը՝ ստանալ ռազմական կրթություն ու դառնալ հայրենիքի պաշտպան: Մայրը՝ տիկին Վարդիկը եւ մյուս մերձավորները խրախուսեցին Գեւորգին, հաջողությամբ հանձնեց քննությունները եւ դարձավ ՀՀ Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի սովորող: Այժմ նա 3-րդ կուրսում է, աչքի է ընկնում կարգապահությամբ, պատվով է կատարում զինվորական երդման պահանջները եւ ծնողական պատգամը: Հրամանատարությունը նշում է Գեւորգի բացառիկ բարեխղճությունն ու կամքի ուժը:

Այս մասին հայտնի դարձավ ինստիտուտի պետ, գեներալ-լեյտենանտ Մ.Կարապետյանի ստորագրությամբ շնորհակալական նամակից, որն ուղղված է տիկին Վարդիկին եւ որում երախտագիտություն է հայտնվում հայրենասեր որդի եւ կարգապահ զինվոր դաստիարակելու համար:

ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆ

Քնարիկ Հովհաննիսյան

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Կյանքի 90-րդ տարում մահկանացուն կնքեց առողջապահության ոլորտի նվիրյալ, մասնագիտությանը եւ շրջապատին նվիրված մի անձնավորություն՝ Քնարիկ Մակարի Հովհաննիսյանը: Ծնվել է 1923 թվականին արհեստավորի ընտանիքում: Բնօրրանը Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Սարին շեն գյուղն է: Երեք տարեկանում ընտանիքով տեղափոխվել են Բաքու: Միջնակարգ կրթությունը ստացել է Բաքվի հայկական N179 դպրոցում: 1940-ին ընդունվեց Երեւանի պետական բժշկական ինստիտուտը, բայց հանգամանքներից ելնելով ուսումը շարունակեց Բաքվի բժշկական ինստիտուտում: Նրան էլ բաժին ընկավ Հայրենական մեծ պատերազմի ծանրությունից: Ցերեկները սովորում էր, գիշերները հերթապահում զինվորական հոսպիտալում՝ ջանալով ամոքել ռազմաճակատից տեղափոխվող վիրավորների վերքերը: Հոսպիտալում էլ 1944-ին հանդիպել է ապագա ամուսնուն՝ Արշավիր Նազարեթյանին, 1946-ին ամուսնանալով՝ տեղափոխվել են Ղափան:

Հետպատերազմյան ծանր ժամանակաշրջան էր, մալարիայի համաճարակ կար: Նորավարտ բժշկուհին մոտ ութ տարի իր ողջ գիտելիքներն ի սպաս դրեց Ղափանի շրջանում մալարիայի համաճարակի վերացմանը: Իսկ 1957 թվականից արդեն շրջանային հիվանդանոցի մանկական կոնսուլտացիայում էր՝ դառնալով մանուկների առողջության պահապանը, նրանց ծնողների բարեկամն ու խորհրդատուն: 1993 թվականին անցավ կենսաթոշակի, բայց շարունակում էր նեցուկ լինել մատաղ սերնդի առողջության պահպանմանը՝ վաստակած հանգստի անցնելուց հետո էլ:

Քնարիկ Հովհաննիսյանը եղել է Ղափանի շրջանային խորհրդի պատգամավոր, պարգեւատրվել «Առողջապահության գերազանցիկ» կրծքանշանով, հոբելյանական մեդալով, իսկ 1984-ին առողջապահության ոլորտում նրա վաստակը գնահատվեց ըստ արժանվույն. արժանացավ ՀԽՍՀ վաստակավոր բժշկուհու կոչման: Վաստակաշատ բժշկուհին իրեն ճանաչողների հոգիներում թողեց մի լուսավոր հիշատակ:

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ) ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 2013-2014 ուստարվա ընդունելություն

1. Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են.

1-ին փուլ – մինչեւ 2013թ. հունիսի 1-ը ներառյալ՝ ժամը 18:00-ն:

Նշված ժամանակահատվածում փաստաթղթեր կարող են հանձնել Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտող եւ նախորդ տարիների շրջանավարտները:

2-րդ փուլ - հունիսի 25-ից մինչեւ հուլիսի 2-ը՝ մինչեւ ժամը 18:00-ն:

Նշված ժամանակահատվածում փաստաթղթեր կարող են հանձնել Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիները եւ օտարերկրացիները, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, նույն տարվա գարնանային զորակոչից զորացրված դիմորդները, նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտները,

3-րդ փուլ (թափուր տեղերի առկայության դեպքում) - հուլիսի 15-ից մինչեւ հուլիսի 20-ը: Բուհում թափուր տեղերի առկայության դեպքում այս ժամանակահատվածում փաստաթղթեր կարող են հանձնել ընդունելության քննություններից դրական միավոր (միավորներ) ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները՝ բուհում լրացնելով նոր դիմում-հայտ:

2. Դիմորդը դիմում-հայտի հետ միասին ներկայացնում է.

1) լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ).

2) 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի).

3) փաստաթուղթ զինվորական ծառայությանն առնչության մասին (զորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդներից փաստաթղթերն ընդունվում են զինվորական հաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշման առկայության դեպքում, իսկ նախկինում առողջական վիճակի կապակցությամբ տարկետում ստացածներից՝ ռազմաբժշկական կենտրոնական հանձնաժողովի նշումների առկայության դեպքում).

4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական): Անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ.

5) զինվորական գրքույկ եւ զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու, ծառայության վայրի եւ ծառայողական բնութագրի մասին.

6) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները (համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության եւ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքների), 1-ին եւ 2-րդ խմբերի, ինչպես նաեւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամները (համաձայն բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից տրված եզրակացության) եւ առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչեւ 23 տարեկան երեխաները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր.

7) միջազգային եւ հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները.

8) ներբուհական յուրաքանչյուր քննության մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու եւ ձեւակերպելու համար 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը:

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են. Գ.Արզումանյան փող. 11, հեռ. (0285) 5-34-61:

Աշխատանքային ժամերն են՝ 09:30-ից մինչեւ 17:30-ը:

ՑԱՆԿ

Դասիչ	Մասնագիտություն	Ընդունելության քննություններ				Ընդունելության տեղեր			Ուսման վարձ (դրամ)
		Մրցութային		Ոչ մրցութային		Անվճար		ՏՏ	
						Ընդամենը	Այդ թվում բզ		
06	ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղ	14	1	128					
010400	Ինֆորմատիկա եւ կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ (գ)**	Հլգ (գ)*	Օտլ (գ)*	2	0	22	402,000
080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն եւ կառավարում (լեռնամետալուրգիական ճյուղում)	Մ(գ)	Ֆ (գ)**	Հլգ (գ)*	Օտլ (գ)*	1	0	18	402,000
090100	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ (գ)**	Հլգ (գ)*	Օտլ (գ)*	3	0	21	402,000
130100	Օգտակար հանածոների հետախուզում եւ մշակում	Մ(գ)	Ֆ (գ)**	Հլգ (գ)*	Օտլ (գ)*	3	1	22	354,000
150100	Մետալուրգիա եւ նյութագիտություն	Մ(գ)	Ֆ (գ)**	Հլգ (գ)*	Օտլ (գ)*	3	0	22	354,000
270100	Շինարարություն, շինարարական իրերի եւ կառուցվածքների արտադրություն	Մ(գ)	Ֆ (գ)**	Հլգ (գ)*	Օտլ (գ)*	2	0	23	354,000

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՇՈՒՄՆԵՐ

Մ(գ) - մաթեմատիկա գրավոր, Ֆ(գ) - ֆիզիկա գրավոր, Հլգ(գ) - հայոց լեզու եւ գրականություն գրավոր, Օտլ(գ) – օտար լեզու գրավոր (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն), բզ - ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված, ՍՏ - առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի:

* - Նշված ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

** - Վճարովի ուսուցման համակարգում թափուր տեղեր առաջանալու դեպքում այդ տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների եւ քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

ԿՈՐԵԼ է Կապանի N3 միջնակարգ դպրոցի 1999-2000 ուստարվա շրջանավարտ Արմինե Ռուբիկի Մարտիրոսյանի միջնակարգ կրթության ԱԱ N012738 ատեստատը: Համարել անվավեր:

Սյունյաց երկիր
ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գլխավոր խմբագիր՝
ê²Ø ì ºÈ ²È º øê ² ÜÚ² Ü

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«**ԳՈՎԱՋԴ - ԾԱՆՈՒՅՈՒՄ**» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 14.05.2013թ.:



ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը ցավակցում է Լյուդվիգ Հարությունյանին՝ մոր՝ Ամալյայի մահվան կապակցությամբ:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը ցավակցում է Աղասի Հակոբջանյանին՝ զոքանչի՝ Անտիկ Սաֆրազյանի մահվան կապակցությամբ: